



**ՇՆՆԵՐ**

**Բարձրահարկերի մասշտաբներից  
Ուրիշ սեսակի շներ են հաշում...  
Սյո շներն ուրիշ սեսակ են աճում,  
Ուրիշ սեսակ են հաշում: Բախտավոր  
Աստղի սակ ծնված շներ են դրանք,  
Ոչ ցավն են սեսել Բողար նախահոր,  
Ոչ բուր են սեսել, ոչ բախտի հեզմանք:  
Ոչ խնայել են գոյք սնային,  
Ոչ դառնալ են մաքրությունը սան,  
Ոչ էլ օրենքն են սերել շնային  
Նախնական լեզվի շարահյուսության:  
Օճվել են անհոգ, անհոգ մեծացել.  
Ոչ իրենց բախտի գինն են իմացել,  
Ոչ էլ իմաստ իրենց «հաճ-հաճի»:  
Թե Բողար դառն զսներ մի հնար,  
Նավիտենական ֆից արթնանար,  
Նրանց հաշոցից գլուխ չէր հանի:  
Նաշում են կարծես գորս է կոկոսում:  
Բայց ի՞նչ արած, շան կոշում են կրում  
Եվ դիտի հաշեն, Ես կոշման դարսֆի,  
Շների վրա փողոց ու բակի...  
Եվ շեն հարցնում ժամանակ ու ժամ,  
Նաշում են նրանք: Եվ միջնու անգամ  
Օրծեռնակների վրա են հաշում,  
Խելոք, ճնարար ծիծեռնակների,  
Որ շեններից շենք շեղակի թռչում,  
Կերն են վաստակում իրենց ծագերի:  
Բայց ծիծեռնակը ծիծեռնակ է միշտ...  
Օրծեռնակները թռնում են գնում  
Եվ այդ շներին շան սեղ շեն դնում:**

Համո Սահյան

ՆԱԲԱԹ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015Թ.  
№ 29 (372)  
**Սյունյաց Երկիր**  
www.syuniacyerkir.am



**Մեղրու տարածաշրջանային հիվանդանոցի շենքը  
պատրաստ է շահագործման**

Մեղրու տարածաշրջանային հիվանդանոցի շենքի կառուցումը նախատեսված ժամկետում ավարտվել է, և այնտեղ ներկայումս իրականացվում են կահավորման և սանիտարական մաքրման աշխատանքներ: Տարակարծությունների, բանավեճերի տեղիք տված շենքն այլևս իրականություն է և իր տեսքով բոլորովին այլ աշխարհ է տեղափոխում մարդուն: Ինչպես

ընդունված է ասել, եվրոպական չափանիշներին համապատասխան կառուցված շենքը, որի ընթացիկ աշխատանքներից միտքով հրապարակումներում անդրադարձել ենք, գտնվում է Մեղրի և Ագարակ քաղաքների միջակա վայրում, ընդ որում՝ երկու առանձին մուտքով:

էջ 7

**Ընտրողները  
կքվեարկեն Նաեւ  
Նույնականացման  
քարտերով**

**Սահմանադրական հանրավե**

Նախորդ ընտրություններում (նախագահական, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների) ընտրացուցակներում տեղ գտած բացթողումներն ու անճշտությունները խոսակցության թեմա են եղել: Եղել են դեպքեր, երբ ընտրողն իր անունը չի գտել ընտրացուցակում և ընտրելու իր իրավունքը վերականգնել է դատարան դիմելուց հետո կամ ընտրացուցակներում տեղ էին գտել մարդիկ, ովքեր վաղուց հրաժեշտ էին տվել երկրային կյանքին: Այս անգամ ընտրացուցակները ստվերում մնացին: Սահմանադրական հանրաքվեի ընտրություններին ընդառաջ կրթերն այլ թեմայի

**շուրջ բորբոքվեցին: Ինչպես ասում են՝  
ամեն ինչ հերթով ու կարգով:**

2012 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ է մտել «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքը: Մանրամասները. Նույնականացման քարտը մարդու ինքնությունն ու քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ է: Եվ քանի որ նույնականացման քարտի, կամ որ միեւնույն է՝ ID պլաստիկ քարտի, վրա հնարավոր չէ դրոշմակնիք դնել ինչպես անձնագրերում, խորհրդարանում կարծիքներ հնչեցին, որ նույնականացման քարտերով հանրաքվեին մասնակցությունը կարող է կասկածի տակ դնել քվեարկության արդյունքները, որ նույնականացման քարտերով քվեարկությունը լայն դաշտ է բացելու կրկնաքվեարկության համար, և պահանջեցին հավելյալ վերահսկող մեխանիզմներ ներդնել: Ընդհուպ առաջարկվեց ընտրության ժամանակ մատի թանաքտման արակտիկան կիրառել: Խորհրդարանական հինգ խմբակցություն ընտրության այս մեթոդի կողմնակից էր և այս ձևը համարում էր բազմակի քվեակության կանխարգելման գործում առաջընթաց: Խորհրդարանում նաեւ թվական տվյալ հրապարակվեց. հանրապետությունում 182 հազար մարդ ունի նույնականացման քարտ, նրանցից որոշների մոտ պահպանվում



է հին մուշի անձնագիր:  
Ինչեւէ, խորհրդարանը սկսեց քննարկել հանրապետական պատգամավորների հեղինակած «ՀՀ ընտրական օրենսգրքում

էջ 2

**Դատական հայց՝  
Գեղանուշի  
պոչամբարի  
պատվարի ամրացման  
հարցով հանրային  
քննարկումներն  
առոչինչ ճանաչելու  
պահանջով**

Սույն թվականի հոկտեմբերի 23-ին «Ռեզիդենտ մոնիտորինգի ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության (երրորդ անձինք՝ Կապան քաղաքապետարան և «Դանդի Փրիշ Մեթալս Կապան» ՓԲԸ)՝ Գեղանուշի պոչամբարի պատվարի ամրացման հարցով հանրային քննարկումներն առոչինչ ճանաչելու պահանջով:

Հիշեցնենք, որ 2015թ. հունիսի 19-ին «Դանդի Փրիշ Մեթալս Կապան» ՓԲ ընկերության ինֆորմացիոն կենտրոնում և 2015թ. սեպտեմբերի 23-ին Կապանի քաղաքապետարանում տեղի են ունեցել քննարկումներ «Դանդի Փրիշ Մեթալս Կապան» ՓԲ ընկերության կողմից ներկայացված՝ «Գեղանուշի պոչամբարի կայունության բարձրացում» նախագծի հայտի և դրա հիման վրա «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ընդունված՝ նախնական գնահատման փորձաքննական որոշման վերաբերյալ:

Հայցապահանջի նորմատիվային հիմքն են կազմում ընթացակարգային նորմերի խախտման հիմնավորումները: Հայցվորի գնահատմամբ, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի խախտման հետևանքով խախտվել են ազդակիր համայնքների ներկայացուցիչների և շահագրգիռ հանրության (այդ թվում հասարակական կազմակերպությունների) ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային և ներպետական օրենսդրությամբ ամրագրված՝ շրջակա միջավայրին առնչվող հարցերում տեղեկատվության մատչելիության, ինչպես նաեւ որոշումների ընդունմանը հանրության մասնակցության իրավունքները:

«Ռեզիդենտ մոնիտորինգի ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ տարածքում գործող միակրուն, որի կանոնադրական նպատակներից է շրջակա միջավայրի պահպանությունը:

**Արշավիր Խալափյան**  
**Կազմակերպության Նախագահ**  
**23.10.2015**



# Կապանը՝ «Լավագույն քաղաքային համայնք - 2015»

## Շնորհավորում ենք

Նոյեմբերի 10-ին Ջերմուկ քաղաքում տեղի ունեցավ Գյուղական համայնքների 5-րդ համաժողովը, որ կազմակերպել էր ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը: Նպատակն էր անցկացնել գյուղական համայնքների կայուն զարգացման ոլորտում գործող բոլոր դերակատարների համոզմունքները և փոխանակման միջոցով ավելի արդյունավետ դարձնել գյուղական համայնքներում տարվող կայուն զարգացման քաղաքականությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ՏԿՄԻ նախարար Ա.Երիցյանը՝ գործընկերներին շնորհավորելով տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման օրվա կապակցությամբ:

ՀՀ վարչապետ Յուրի Կրիստիանյանը, ողջունելով համաժողովի կազմակերպիչներին և մասնակիցներին, մասնավորապես նշեց. «Այս տարվա համաժողովի օրակարգում ներառված են գյուղատնտեսության և զբոսաշրջության բնագավառներին առնչվող խնդիրներ: Դրանցից առաջինը նախաձեռնում է գյուղական համայնքների բնակչության զբաղվածությունը և եկամտունեքը, երկրորդը՝ նոր ձեռավորվող գործունեությունը և հնարավորությունները: Ինչպես նաև փորձի, իրականացվող առաջնությունը եղել է մտնում են գյուղացու ամենօրյա չարժանքով ստեղծված գյուղմթերքի իրացման խնդիրները: Միևնույն ժամանակ իրականացվում են աշխատանքներ՝ ավելի շատ հողատարածքներ ոռոգելի դարձնելու և եղած խոզազանցումը համայնքներում տեղեկատվական համակարգերի ստեղծման և ներդրման ուղղությամբ: Հավաստեցնում են, որ իրականացվող բարեփոխումները լինելու են շարունակական: Վստահ են՝ ունենալու ենք կայուն և բարեկեցիկ կենսամիջավայր ապահովող համայնքները»:

2005 թվականից կազմակերպվում է «Հայաստանի համայնքների միության» և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից համատեղ անցկացվող «Տարվա լավագույն համայնք» մրցանակաբաշխությունը, որն այս տարի ամփոփվեց Գյուղական համայնքների 5-րդ համաժողովի շրջանակներում: Այն

նպատակ ունի ավելի թափանցիկ ու իրապարակային դարձնել համայնքների գործունեությունը, ինչպես նաև ձեռավորել առողջ մրցակցություն՝ խթանելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Մրցանակաբաշխությունն անցկացվում է համայնքների կողմից գրավոր ներկայացված հայտերի հիման վրա: Գնահատումն իրականացվել է հատուկ այդ նպատակով ձեռավորված մրցութային հանձնաժողովի կողմից:

Ըստ այդմ՝ «Լավագույն քաղաքային համայնք-2015» անվանակարգում հաղթող է ճանաչվել Կապանը: «Գնահատված լինելու ուրախ զգացողությունից զատ՝ սա նաև մեծ պատասխանատվություն է մեզ համար, և հասկանում ենք, որ պարտավորեցնում է հետագայում ես արժանի լինելու ստացած կոչմանը ու առավել լավ աշխատելու», - նշեց համայնքի ղեկավարը՝ փաստելով, որ այս մրցանակը համայնքի ողջ բնակչությանն է:

Մարզից մեկ այլ անվանակարգում՝ «Համայնքային կյանքի լավագույն լուսաբանում-2015», հաղթող է ճանաչվել լրագրող Դիանա Բախշյանը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Ընտրողները կքվեարկեն նաև նույնականացման քարտերով

Էջ 1

փոփոխում և լրացում կատարելու մասին» և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նպատակ ունենալով նույնականացման քարտերով ապահովելու քվեարկությանը մասնակցելու քաղաքացիների սահմանադրական իրավունքը՝ առաջարկվում էր նշված օրենսգրքում և օրենքում փոփոխություն կատարելով սահմանել,

որ քվեարկության ժամանակ նույնականացման քարտը նույնպես համարվում է ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ:

Քննարկման ժամանակ փոխադարձ մեղադրանքներ հինգեցին:

Մի քանի օր շարունակ քննարկված օրենսդրական առաջարկն ընդունվեց 74 կողմ ձայնով, դեմ արտահայտվեց 13 պատգամավոր, իսկ 18-ը ձեռնպահ էր: Նույնականացման քարտով հանրաքվեի մասնակցած անձանց անունների դիմաց ընտրացուցակում պիտի նշվի, որ ընտրողը քվեարկել է ID քարտով:

Ինչպես «Սյունյաց երկիր» հայտնեց թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Սերգեյ Սարգսյանը, այս օրերին ձեռավորվում է ընտրատեղամասերի հանձնաժողովների կազմը: Ընդ որում՝ հանձնաժողովի ութ անդամից վեցն առաջադրվում է կու-

սակցությունների կողմից: Նա նաև կոչ արեց ընտրողներին՝ ճշտել, թե արդյո՞ք իրենց անունները կան ընտրացուցակներում, թե՞ ոչ: Չլինելու դեպքում մինչև ղեկտեմբերի 1-ը դիմել ոստիկանության անձնագրային բաժանմունք՝ վերջնական ցուցակներում ընդգրկվելու համար:

Ի դեպ, թիվ 38 ընտրատարածքում ղեկտեմբերի 6-ին կկայանան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ՝ Չափնիում համայնքի ղեկավարի, Ավանքում՝ ավագանու անդամների: Հանձնաժողովի նախագահի փոխանցմամբ՝ ՏԻՄ ընտրությունները ոչնչով չեն խանգարի սահմանադրական հանրաքվեին: Այդ նույն օրը ՏԻՄ ընտրություն կկայանան նաև թիվ 37 ընտրատարածքում՝ Աշտուվան և Վաղատուր գյուղական համայնքներում:

**ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**



**ԱՆՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**  
Կապանի քաղաքապետ

## Ուղերձ

### Սիրելի՛ կապանցիներ

Շնորհավորում են բոլորիս Կապանը 2015թ. Հայաստանի «Լավագույն քաղաքային համայնք» ճանաչվելու կապակցությամբ:

Ընթացիկ տարին հիշարժան կդառնա մեր քաղաքի պատմության համար:

Սա, բնականաբար, միայն համայնքային իշխանությունների աշխատանքի արդյունքը չէ: Մրցանակը համայնքի բոլոր բնակիչներին է. առանց ձեր վստահության և աջակցության հնարավոր չէր լինի հասնել նման հաջողության, ուստի շնորհակալ եմ ձեզ՝ համայնքային կյանքին ակտիվ մասնակցելու, նրա տարբեր ոլորտներում ներդրում ունենալու, համբերատար լինելու, մեր թերացումները մատնանշելու և դեռևս առկա խնդիրներին ըմբռնունով մոտենալու համար:

Չնայած մրցանակաբաշխությունը կազմակերպվում է ամեն ընթացիկ տարվա համար, բայց, իհարկե, սա ընդամենը մեկ կամ մի քանի տարվա աշխատանքի գնահատականը չէ, այլ՝ տարիների, եւ յուրաքանչյուր համայնք այս կոչմանը հասնելու համար ճանապարհ է անցնում:

Ստացած գնահատականը մեծ պատասխանատվություն է մեզ համար, և հետագա գործունեությամբ պիտի ձգտենք բարձր պահել այս մրցանակի պատիվը:

Շնորհակալ ենք նաև մեր բոլոր գործընկերներին, որոնք կանգնած են համայնքի կողքին և աջակցում են մեր ծրագրերի իրականացմանը:



## Մայր Աթոռում տեղի է ունեցել «Լավագույն ուսուցիչ» 2015թ. մրցույթի մրցանակաբաշխությունը

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ժայռագույն պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի նախագահությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգյան հոգևոր ծեմարանի հանդիսությունների դահլիճում նոյեմբերի 10-ին տեղի է ունեցել «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների ուսուցիչների ու դասավարների՝ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթի 2015թ. հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը:**

ուսուցիչ այս տարի մարզում չկա: Երկրորդ մրցանակ է արժանացել Սիսիանի ավագ դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանը, երրորդ մրցանակի՝ Սիսիանի N5 հիմնական դպրոցի «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ուսուցչուհի Գոհար Հայրապետյանը, Կապանի N5 հիմնական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսուցչուհի Վարդուհի Օհանջանյանը, Գորիսի N3 հիմնական դպրոցի դասվար ժամանե Խուրշուդյանը: Խրախուսական մրցանակի են արժանացել Ամենայն միջնակարգ դպրոցի «Կենսաբանություն» առարկայի ուսուցչուհի Սամուշակ Դավթյանը, Կապանի N9 ավագ դպրոցի «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ուսուցչուհի Նուրե Զհանգիրյանը, Սիսիանի N5 հիմնական դպրոցի դասվար Անժելա Մամուկյանը:

Այն իրականացվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ և ՀՀ կրթության ու գիտության նախարարության ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համատեղ ջանքերով:

Մյուսիքի մարզից այս տարի մրցույթին մասնակցել է 11 ուսուցիչ, որից 7-ն է արժանացել մրցանակի: Առաջին մրցանակի արժանացած

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Ակնարկ

# Մարդը նրա համար չէ ստեղծված, որ պարտություններ կրի

Ուսուցչի վարքի միայն լավ օրինակն առավել օգուտ է աշակերտին, քան բազում դասերն առանց լավ օրինակի: Իրավամբ այս խոսքը ոչ բոլոր ուսուցիչների վաստակի մասին կարելի է ասել: Մանկավարժի աշխատանքային գործունեությունն ամփոփում են նրա մասին գործընկերների, աշակերտների կարծիքները, այն հաջողությունները, որոնց տարիների ընթացքում հասնում են իր սաները, հասարակության մեջ նրա մասին ունեցած տեսակետները, թեկուզ երբեմն իրար հակասող. չէ՞ որ հակասականությունից նույնպես ծնվում է ճշմարտություն:

«Սուսաննա Օհանջանյանը ուսուցչական սերունդի երեւելիներից է: Մանկավարժական երկարամյա աշխատանքի անդուլդի վրա կայացել է որպես ազգային պատմության, մշակույթի ու բանասիրության խորագիտակ անհատականություն: 18 տարի եղել է գյուղական ուսուցման բովում, ճանաչվել որպես առաջատար մասնագետ: Հույժ հուզական ու հուզող է, օժտված է գրական կերպարների հետ վեհանալու, գործնալու, արտասվելու եւ մաքառելու բնատուր-բացառիկ շնորհներով», – գրում է Ռոբերտ Էջանյանը:

1975 թվականից մինչ 2015թ. սեպտեմբեր տեւած մանկավարժական բուռն գործունեություն՝ նպատակներ, սպասումներ, դժվարություններ ու, այդ ամենով հանդերձ, մանկավարժի կոչմանը ողջ կյանքում հավատարիմ մնալու սկզբունք: «Ծնվել եմ Վաչագանում: Գրքերի բազմապիսի ու տիեզերական աշխարհում է անցել ողջ կյանքս. սերը գրքի հանդեպ սերմանեցին ծնողներս՝ գրադարանավարուհի մայրս եւ ուսուցիչ հայրս: Ընթերցում էի նույնիսկ այն գրքերը, որոնց իմաստը չէի հասկանում. գյուղի ավագներից լսելով շատ ու շատ հեղինակների ստեղծագործությունների մասին՝ վերցնում ու ընթերցում էի. այն ժամանակ ինձ համար էական չէր բովանդակությունը ընթերցելը: Ընթերցելու անհագ ծարավն իմ մեջ ծնեց մանկավարժ դառնալու ցանկությունը», – հիշում է բազմամյա մանկավարժ, հայոց լեզվի եւ գրականության մասնագետ Սուսաննա Օհանջանյանը:

Իր իսկ խոստովանությանը՝ մանկավարժ դարձել է Լեռնածոլում, որտեղ աշխատել է 1975-92թթ.: Միջավայրը, որ գլխավորում էր տաղանդաշատ Ռոբերտ Գրիգորյանը (Էջանյանի), խիստ մանկավարժական էր: Ռ.Գրիգորյանը մղում էր ստեղծագործական աշխատանքի, անընդհատ պրպտունների: «Ի սկզբանե հայտնվել եմ մանկավարժական բեղմնավոր գործունեության մղող առողջ միջավայրում, որտեղ կային հրաշալի, ապագայի նկատմամբ հավատով լցված մարդիկ. երեւի սա էր իմ հաջողության հասնելու գրավականներից մեկը: Ես այն կարծիքն եմ, որ լավ մանկավարժ դառնալու համար պիտի սկսել գյուղական դպրոցից, որը, սակայն, պիտի առնվազն հավասարազոր լինի Լեռնածոլի դպրոցին: Իմ ամենամեծ գործընկերը, նա-

խեւառաջ, Ռ.Էջանյանից էր, ում հետ անչափ շատ եմ խորհրդակցել, պարտադիր չէր, որ ես հարց տայի նրան, մեր գրույցներում էին թաքցնված իմ հարցերի պատասխանները», – ոգեւորությամբ հիշում է գործունեության լավագույն եւ իր իսկ բնութագրմամբ՝ անաղարտ տարիները:

Աշխատանքային գործունեության կարեւորագույն նախապայմանը խելացի, քեզ գնահատող ղեկավար ունենալն է: Ս.Օհանջանյանի պնդմամբ՝ իր բախտը բերել է, որ հրաշալի տնօրեններ է ունեցել: Հետագայում հայացք ձգելով՝ նա այսպես է նկարագրում իր ղեկավարներին. «Եթե Ռոբերտ Գրիգորյանը ռոմանտիկ էր եւ մղում էր ստեղծագործական աշխատանքի, Հասմիկ Համբարձումյանն իրականություն էր դարձնում շատ բան, Լեռնիկ Պետրոսյանը տեսնում էր ապագան ու ոգեւորում: Այդ երեք տնօրեններից ես վերցրի առավելագույնը: Առաջինն ինձ գնահատեց Ռ.Գրիգորյանը, ում հետ աշխատելու տարիներին արժանացա ավագ ուսուցչի կոչման: Լ.Պետրոսյանը կրթության բնագավառում լողում էր եւ դեռեւս 2001թ. ստեղծելով վարժարանը՝ կարելի է ասել ձեւավորեց ներկայիս ավագ դպրոցի գաղափարը, որ սրերով ընդունվեց ժամանակին, բայց, չնայած ամեն ինչին, կայացավ: Նրա օրոք ես արժանացա բազում մրցանակների, քաղաքային եւ մարզային մրցանակներից մինչեւ կառավարական պարգև: Եթե ամփոփելու լինեմ, իմ մանկավարժության երջանիկ տարիները Լեռնածոլի դպրոցում են անցել, իմաստնացած տարիները՝ վարժարանում. այդտեղ էլ եղավ մանկավարժական բերքավառը»:

40 տարվա աշխատանքային փորձ ունեցող մանկավարժին աշխատելաժողի հստակ բանաձեւն է մշտապես ուղղորդել. «Ուսուցիչը պիտի իր առարկայի առաջնորդ լինի, բարի ու հոգատար վերաբերմունք ունենա. դեպի երեխայի գլուխը, սիրտը, հոգին տանող միակ ուղին պիտի լինի բարոյությունը: Պիտի պատրաստ լինես բոլոր մարտահրավերներին, աշակերտն անկանխատեսելի է, բայց նա շատ արագ է ճանաչում ուսուցչին, բացահայտում է և գիտելիքները, եւ բնավորությունն թույլ եւ ուժեղ կողմերը»:

Իսկ իր հաջողության հասնելու բանաձեւը եղել է այն, որ լավ, բարի մանկավարժներով է շրջապատված եղել, մարդիկ հավատացել են իր կարողություններին ու ըստ արժանվույն գնահատել, վայելել է աշակերտների սերը, քանի որ նախեւառաջ նրանց սիրել ու հավատացել է եւ հետո «կարելու է, թե սերնը որտեղ է ծլարձակվում. իմ հողը շատ պարարտ էր»:

Որպես մանկավարժ՝ երջանիկ է իրեն զգում, քանզի հարյուրների հասնող աշակերտներից յուրաքանչյուրը նրան ինչ-որ բան է տվել, եւ հարուստ է հենց դրանով, նրանցից եկող սիրով:

Հիշում է՝ երբ աշխատանքային առաջին տարում պիտի արձակուրդ գնար, Էջանյանից մի երկտող տվեց, բայց խնդրեց, որ Վաչագա-



նում բացի այն (Ս.Օհ.՝ կարծես եթե ճանապարհին բացեի, տեսնելու էր): Երկտողում գրված էր՝ գտնել Հյուբշմանի լուսանկարը: Եվ այդ երկտողն առիթ հանդիսացավ՝ տեսական ժամանակ անվանի լեզվաբան Ալտո Աբրահամյանի հետ մանակագրական կապ ունենալ (Ս.Օհ.՝ երկար տարիներ անվանի մարդկանց հետ մանակագրական կապեր են ունեցել):

Միակ ափսոսանքն այն է, որ պատերազմի տարիներին աշխատած ուսուցիչները, ովքեր մեկ րոպե անգամ չեն լքել դպրոցը, որոնց շնորհիվ մեկ օր անգամ չի փակվել դպրոցի դուռը, ըստ արժանվույն չեն գնահատվել: Իսկ ընդհանուր առմամբ ոչնչի համար չի ափսոսում, ինչ նախածեռնել է, իրականություն է դարձրել, անգամ սխալների համար երբեք վատ չի զգացել, քանի որ մարդն անսխալական չէ. ներողություն է խնդրել, եթե նրա անհրաժեշտությունը եղել է:

«Մտահոգությունս՝ սերը բացակայում է, բնութայինը մարդուց խռովել է: Ինչպես Մարկեսն է ասել. «Ես չեմ ուզում, որ մարդը մեռնի մեռած»: Ինչ-որ մեկն է ասել. «Մարդու բոլոր տեսակները սարսափելի են, իսկ ամենասարսափելիք փառամուլներն են: Այն տեսակը, որ ուզում ենք մեր կողքին տեսնել, առնվազն ռոմանտիզմի ժանրից է»:

Բայց, միեւնույն է, ես հավատում եմ մարդուն», – նշում է Ս.Օհանջանյանը:

Հագարավոր գրական կերպարների հետ առնչվելով, նրանց հետ ապրելով, դասեր քաղելով՝ այնուամենայնիվ Սուսաննա Օհանջանյանն իրեն նմանեցնում է Էռնեստ Զեմինգուելի «Ծերունին եւ ծովը» պատմվածքի ծերունուն. «Ես չեմ սիրում պարտություններ կրել, եւ, ինչպես ծերունին է ասում, մարդը նրա համար չէ ստեղծված, որ պարտություններ կարձատես են եղել, ժամանակավոր, որովհետեւ ես ինձ ուժեղ անհատականություն եմ համարում, երբեք հուսահատության գիրկը չեմ ընկել՝ չնայած կյանքումս բազում խոչընդոտների եմ հանդիպել: Ծերունին իմ ուղեկցին է եղել, միշտ իմ աչքի առաջ՝ իր պայքարելու եւ հաղթանակի հասնելու հաստատականությամբ», – ինքն իրեն պատկերավոր բնութագրում է:

Բռնկում է, հուզառատ, համարձակ, ճշմարտախոս (խմբ.՝ որի համար հաճախ է տուժել) վիրա-

վորվում է, բայց կարճ է տեսում: «Ներում եմ հեշտ, բայց չեմ ներում դավաճանությունը: Չեմ սիրում թիկունքում գործել. գրական հերոսներից մեկն ասում է՝ փրկի՛ր դեմքը, եթե կարող ես: Ես այն եմ, ինչպիսին կամ, փրկելու բան չունեմ», – նշում է մանկավարժը:

Վիլյամ Սարոյանի պատմվածքներից մեկի հերոսն ասում է՝ այնտեղ, որտեղ ես ծնվել եմ, մարդիկ բարեկիրք են: Ընտանիքում մշտապես սերմանել են բարոյություն, մեծի հանդեպ հարգանք, հավատարմություն. «Մայրս ու հայրս մեզ անչափ շատ բարոյություններ արկեցին, որի համար նաեւ վճարում ենք: Լավ է թե վատ, կարելու չէ»:

Անձնական կյանքի ամենամեծ ձեռքբերումը դուստրն է՝ Հասմիկը, ով ընտրել է նաեւ մայրիկին հոգեհարազատ մասնագիտություն՝ արվեստաբանություն: Շատ ընկերներ չի ունեցել, բայց քաղաքում եղել են եւ կան մարդիկ, որոնց հետ զրուցելը հաճույք է պատճառել: Հատկապես առանձնացնում է լուսահոգի Վաչիկ Եփրեմյանին, որի կրթությամբ քաղաքը մի լավ մտավորականից զրկվեց: Երկար չէր զրուցում հետը, բայց նրա ասած թեկուզ կարճ նախադասությունը լցնում էր ողջ օրը, հոգին, մտորելու տեղիք տալիս: Անհատներ կան, որոնց հետ շփումը լցրել է հոգու դատարկ տեղերը:

Գործնական ձեռքբերումը համարում է այն բոլորը, ինչ կարող է մանկավարժը ունենալ՝ աշակերտների սեր, գործընկերների հարգանք, լավագույն մասնագետի համբավ, մեղավակիրներ, առարկայական օլիմպիադաներում մշտապես հաղթողներ, կառավարական մրցանակներ:

Իր գործին նվիրված, նաեւ դպրոցով ապրող մարդուն չեն կարող չնտահոգել դպրոցի առջեւ կանգնած խնդիրները: Համախափ դժվարությամբ ընդունվող նորագույն մեթոդների մուտքը դպրոց նա համարում է ժամանակի անհրաժեշտություն, պարզապես դրանք մեխանիկորեն չպիտի կիրառել, պիտի կարողանաս տեղայնացնել՝ գտնելով ոսկե միջինը, նորը հին հետ քոնը դարձնել եւ օգտագործել: «Ցավով պիտի նշեմ, որ դպրոցն աստիճանաբար զրկվում է լավագույն մասնագետներից. երիտասարդներից շատերի հպարտությունը թույլ չի տալիս հարցնել սովորել, իսկ փորձառուները, իրենց շատ արժեւորելով, չեն սովորեցնում. այս սառույցը պիտի կտորվի: Սերնդափոխու-

թյունը մեզանում սահուն չի ընթանում», – իր մտահոգությունն է հայտնում Ս.Օհանջանյանը:

Այն, որ ուսուցիչ-աշակերտ հարաբերություններն այսօր անհրաժեշտ մակարդակի վրա չեն, ամփոփելի փաստ է եւ գլոբալ հարց: Աշակերտը չի ուզում գնալ դպրոց, ինչը՞ ու դպրոցն աշակերտի համար ցանկալի վայր չի համարվում. ուսուցման մեթոդներն են հին, թե՞ ուսուցիչը չի կարողանում ընդհանուր լեզու գտնել աշակերտի հետ, գրավել նրան: Ս.Օհանջանյանի պնդմամբ՝ խորհրդային տարիներին գուցե կաշկանդվածություն կար այդ հարաբերություններում, բայց ուսման հանդեպ հետաքրքրություն կար, բայց այսօր եւ հետաքրքրություններն են պակասել, եւ անկեղծ հարաբերությունները:

Հարցը բազմակողմանի պիտի բնմկի, ի վերջո այստեղ միայն աշակերտի մեղավորությունը չէ կամ էլ ժամանակի բարբերի. աշակերտը պիտի վստահ լինի, որ իր առջեւ կանգնած է չափազանց խելացի մեկը, ով սիրում է իրեն, հարգում ու վստահում:

«Այսօրվա սերունդը, չափազանց շատ եմ սիրում. հետաքրքիր, ազատամիտ, ուրույն մտածելակերպ ունեցող, քեզ հակադրվող, որ մեր տարիներին դժվար թե հանդիպել: Սերունդ, որն ընդունակ է ամեն ինչի՝ փոքրիկ սխրագործությունից մինչեւ հայրենիքի համար զոհվելը: Ո՛րժեղ ու խելացի սերունդ է, որ պարտավոր է այս երկիրն ավելի լավ դարձնելու. ես հավատում եմ դրան», – նշեց նա:

Մանկավարժական գործունեությունից բացի, նրան հրապուրել է լրագրությունը. ժամանակին հրատարակել է «Ալաքը» թերթը, պատերազմներից վարիներից աշխատել հեռուստատեսությունում, ինչպես ինքն է ասում, լամպի լույսի տակ հեռուստահաղորդում էին պատրաստում: Այդ դժվարին օրերին մեկ օր անգամ չի մտածել հայրենիքը, ծննդավայրը լքելու մասին, «հայրենիքից դուրս ինձ չեմ պատկերացրել, դու ուժեղ ես քո հայրենիքով, քո հողով, քո անցյալով, որ կարող է նաեւ ապագա դառնալ»:

Պատերազմի տարիներին Կապանի քաղաքում միակուսակա Ռադիկ Սարոյանյանի աջակցությամբ Կապանում բացել է «Ասպի»-ի տղաներից վարուժան Կարապետյանի նկարների ցուցահանդեսը: Երկար տարիներ մանակագրական կապ է ունեցել նրա հետ, այդ ընթացքում Կապանից հարյուրավոր մանակ-դիմումներ հավաքել՝ այն ժամանակվա Ֆրանսիայի կախագահ ժակ Շիրակին ուղարկելու՝ նրան ազատելու համար:

Գրել է արձակ բանաստեղծություններ, որոնք չի հրապարակել, որովհետեւ գրել է իր համար:

«Անցել եմ վաստակած հանգստի, որին դեռ մեկ տարի առաջ պատրաստ էի, շփումս աշակերտների հետ շարունակվում է, որոնք, գիտելիքի բացի, տալիս եմ իմ անկեղծ խորհուրդները: Դպրոցից դուրս ինձ հետ տարել եմ նրանց սերը: Հնորակալ եմ Աստծուն, շնորհակալ եմ, որ կարողացել եմ իրականություն դարձնել իմ երազանքները», – ամփոփեց Սուսաննա Օհանջանյանը:

Սուսաննա Օհանջանյանի՝ որպես ուսուցչի կերպարի մասին կարելի է ամվերջ գրել, որովհետեւ նրա հետ զրույցներում թաքցված էին մեր հարցերի պատասխանները: Բարությունից, հազար ու մի բաներից բացի, ես՝ որպես նրա աշակերտուհի, նրա գլխավոր արժանիքը համարում եմ անկեղծությունը, համարձակությունը, հաստատականությունը, խստապահանջությունը ու նպատակալացությունը:

Իրավական



# Սյրի եւ կամայականութեան հրավառութիւն

Համառոտ պատմություն մի դատական գործի, որի վերաբերյալ ընդունված վճռի առանձին կետեր եւ ՀՀ գործող օրենսդրությունը հեռավոր աղերսներ անգամ չունեն

Խոսքը ՍԳ/0397/02/13 քաղաքացիական գործի մասին է, որի դատաքննությունը վարել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անահիտ Թումանյանը:

Կապան քաղաքի բնակիչ Գագիկ Ղաիրամյանը եր հայցադիմում ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, թե Սամվել Ալեքսանյանի հեղինակած «Թշվառականը» հոդվածն իր մասին է (հոդվածը տպագրվել է «Սյունյաց երկիր» 2013թ. սեպտեմբերի 3-ի համարում):

Երկարատե դատաքննությունից հետո դատարանը պարզել է, որ «Թշվառականը» գլխավոր հերոսն իրոք Գագիկ Ղաիրամյանն է: Եվ 2014թ. ապրիլի 2-ի վճռով հայցը մասնակիորեն բավարարվել է:

Վճռի հետ համաձայնվել էլ չէինք կարող: Եվ այն բողոքարկեցինք ՀՀ վերաքննիչ, ապա՝ ՀՀ վճռաբեկ դատարանում:

Փաստաբանը, ով գրել էր եւ վերաքննիչ բողոքը, եւ վճռաբեկ բողոքը, հաստատուն ու անշեղ քայլերով մեզ տարավ պարտության ճանապարհով (վարձավճարը ստացել էր նախապես): Եվ ճիշտ արեց... Միայն Վերաքննիչի ու Վճռաբեկի որոշումներին ծանոթանալուց հետո պարզ դարձավ, թե դատական որպիսի անհեթեթություններով են գրվել մեր բողոքները:

Փաստաբանը կարողացել էր օգտվել մեր՝ այդ ոլորտում ունեցած անփորձությունից եւ մեզ վրա ծիծաղելու իրավունք վաստակել:

Ստիպված էինք դատարանի վճիռը կատարել:

Վճռում, սակայն, կար մի կետ, որ կատարել հնարավոր չէր, քանի որ այդ կետն Անահիտ Թումանյանը գրել էր առանց իրավական հիմքի, քննադատելով:

Ըստ վճռի այդ կետի՝ Սամվել Ալեքսանյանը ներողություն եւ հերքում պարունակող տեքստերը պետք է հրապարակի «Սյունյաց եր-

կիր» թերթում:

Անահիտ Թումանյան դատավորը, սակայն, չէր նշել, թե իրավական ինչ հիմքով է (գործող օրենսդրության որ դրույթի հիման վրա) «Սյունյաց երկիր» թերթը մատնացույց արվում, մանավանդ որ պատասխանող կողմը լրագրող (քաղաքացի) Սամվել Ալեքսանյանն էր եւ ոչ թե լրատվական միջոց կամ լրատվական գործունեություն իրականացնող «Սյունյաց երկիր» թերթը:

Դրանով, փաստորեն, դատավոր Անահիտ Թումանյանը գերազանցել է իր լիազորությունները, չարաշահել իր պաշտոնական դիրքը եւ օրենքի հետ որեւէ աղերս չունեցող պահանջ ներկայացրել տղերքիս հեղինակին:

Դատավարության ընթացքում այդ հարցը (եւ ոչ միայն այդ հարցը) քանիցս բարձրացվել է մեր կողմից, բայց դատավորն այդպես էլ չէր փորձել խորանալ մեր հայտարարությունների եւ միջնորդությունների մեջ:

Մենք նրա թույլ տված այդ ապօրինությունը հիմնավորելու համար հիշեցրել ենք գործող օրենսդրության առնվազն երկու դրույթ, ըստ որի՝ դատարանն այս դեպքում իրավունք չունի «Սյունյաց երկիր» թերթի առջնաթիվը Սամվել Ալեքսանյանին պահանջ ներկայացնել:

Ստորեւ ներկայացնում ենք օրենքի այդ դրույթները, որոնք դատավորը չի հասկացել կամ չի կամեցել հասկանալ ու իրագործել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հոդված 1087.1, կետ 7, 2-րդ ենթակետ. «Եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը եւ ծավալը սահմանում է դատարանը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հոդված 1087.1, կետ 8, 1-ին

ենթակետ. «Եթե գրապարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հերքել գրապարտություն համարվող փաստացի տվյալները եւ (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը եւ պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով»:

Անահիտ Թումանյանը չի տարբերակել (եւ մինչեւ հիմա չի տարբերակում) լրագրող հասկացությունը եւ լրատվական գործունեություն իրականացնող հասկացությունը:

Մի խոսքով՝ պատասխանողը եղել է լրագրողը, իսկ ինքը ներկայացրել է պահանջ, որը բացառապես վերաբերում է լրատվական գործունեություն իրականացնողին:

Անահիտ Թումանյանը դատավորն ակնհայտ ձեռով խախտել է նաեւ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 2-րդ ենթակետը. «Արգելվում է՝ որեւէ տեղեկատվություն տարածելու կամ դա տարածելուց հրաժարվելու նպատակաւորված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ»:

Եվ գործող օրենսդրության հանդեպ նման կամայական, արհամարհական վերաբեմունքը տեղիք է տվել հարցի (այդ հարցն այսօր էլ առկա է)՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ո՞րն է գերակա՝ Անահիտ Թումանյանի կամ մեր՝ ՀՀ գործող օրենսդրությունը:

Եվ գիտե՞ք որն էր անհեթեթության գագաթնակետը. Անահիտ Թումանյանն այդ վճիռը կարդաց «Հանուն Հայաստանի Հանրապետության» սկզբնախոսքով:

Անահիտ Թումանյանը, մեր կողմից վիճարկվող պահանջը վճռի մեջ գրելով, խախտել է նաեւ ՀՀ քա-

ղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 132-ը: Ըստ այդ հոդվածի՝ վճռի մեջ վերոնշյալ պահանջները գրելիս նա պետք է վկայակոչեր նաեւ այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը կամ այլ իրավական ակտեր, որոնցով դատարանը ղեկավարվել է տվյալ վճիռը կայացնելիս: Մինչդեռ, նա որեւէ օրենք կամ իրավական ակտ չի վկայակոչել նման պահանջ ներկայացնելիս:

Մենք չկատարեցինք դատարանի վճռի այդ մասը՝ համարելով, որ այն ապօրինի պահանջ է: Հարկադիր կատարողները գործը հասցրին ՀՀ քննչական կոմիտե՝ իբր դատական ակտը դիտարկող չի կատարվել: Բայց, ըստ հարկադիրների, դատական ակտը չի կատարել ոչ թե լրագրող Սամվել Ալեքսանյանը (այս դեպքում դրանական տուգանք է նախատեսվում), այլ լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի ղեկավար Սամվել Ալեքսանյանը (այս դեպքում քրեական պատասխանատվություն է ենթադրվում): Մինչդեռ, ինչպես նշել ենք, պատասխանողը եղել է ոչ թե լրատվական գործունեություն իրականացնողը, այլ լրագրողը:

Փառք Աստծո, քննչական կոմիտեում գործ ունեցանք գրագետ, բանիմաց եւ բարոյական նկարագրով մարդկանց հետ, ովքեր հարկադիրի ակնհայտ խաղն անհեթեթ համարեցին եւ գործը վերադարձրին ՂԱԳԿ ծառայություն:

Ս.թ. հոկտեմբերի 26-ին ՂԱԳԿ ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մարտ Արմեն Ջաքարյանը հարուցել է նոր կատարողական վարույթ...

Իհարկե, մենք կարող ենք կեղծված ու աղավաղված դատավարության հակաօրինական որոշումը վերստին չկատարել, ՂԱԳԿ գործողությունները բողոքարկել ՀՀ վարչական դատարանում: Բայց դրա իմաստը, կարծեք, չկա, որովհետեւ ամեն ինչ պետք է պտտվի նորից ու ամկնջը եւ մեզանից ժամանակի վատնում պահանջի:

Ահա եւ ինչու կրկին (թերթի տպագիր օրինակում) հրապարակում ենք հռչակագրում «Թշվառականը» հոդվածը, որի հերոսը, ըստ Անահիտ Թումանյանի, Գագիկ Ղաիրամյանն է: Հրապարակում ենք նաեւ հերքում ու ներողություն պարունակող տեքստերը:

Ի դեպ, մենք կրկին ու մեծագույն հաճույքով ստորագրում ենք «Թշվառականը» հոդվածի տակ, որը ոչ միայն լրագրողական հաջողված աշխատանք է: Այն արդեն իսկ մտել է Հայաստանի դատական տարեգրության մեջ, իսկ որոշ դեպքերում նախադեպ դարձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածին ճանջվող գործերի քննարկման ընթացքում:

Իսկ Անահիտ Թումանյանին եւս մեկ անգամ հիշեցնում ենք՝ դատարանի կողմից ներկայացված այդ պահանջն օրենքով չնախատեսված միջամտություն է խոսքի ազատության իրավունքին: Ներողություն հայցող կամ հերքող տեքստի հրապարակելուն պարտավորեցնող դատական ակտի հրապարակումը լրատվական միջոցում (այս դեպքում) կախված է ՀՀ-ի կամքից: Հակառակ դեպքում, կրկնում ենք, դա ուղղակի միջամտություն է ՀՀ-ի իրավունքներին:

Մեծ իմաստով չարժեր նույնիսկ նման հիշեցում կատարել, քանի որ, դատելով սույն դատական գործի ընթացքից, Անահիտ Թումանյան դատավորի համար կարելուրն ու գերական Հայաստանի Հանրապետության օրենքները չեն, այլ կլանա-

յին շահերն ու անձնական խնդիրները:

Սակաճը հիմնավորելու համար եւս մեկ դրվագ՝ նույն դատական գործից:

Հայցվորը պատասխանող Սամվել Ալեքսանյանից պահանջել էր 3 մլն դրամի չափով փոխհատուցում: Դատարանը, սակայն, որոշել էր պատասխանողից բռնագանձել 180 հազար դրամ:

Առաջին հայացքից թվում է, թե դատարանը բարի կամք է դրսևորել եւ հասցված «վնասին» համաչափ նյութական պահանջ ներկայացրել: Մինչդեռ... Ամիսներ շարունակ տեւող դատական գործընթացում (մեր բազմաթիվ հիշեցումներից հետո անգամ) Անահիտ Թումանյանը չկամեցավ հայցվորի կողմից ապացույցներ պահանջել խիստ անհրաժեշտ երկու հարցի վերաբերյալ:

ա) Ապացույցներ բռնագանձում պահանջվող գումարի չափի եւ կառուցվածքի վերաբերյալ:

բ) Ապացույցներ ոչ նյութական պահանջի հետ մեկտեղ նյութական պահանջ ներկայացնելու հիմնավորվածության մասին (ինչո՞ւ չի կարելի բավարարվել ոչ նյութական պահանջով եւ պետք է նաեւ նյութական պահանջ իմիջիայրոց, դա Սահմանադրական դատարանի կողմից կանոնակարգված դրույթ է):

Ընդ որում՝ այդ հարցերի հստակեցումը պետք է կատարվեր ոչ ուշ, քան նախնական դատաքննության ժամանակ (եթե, իհարկե, չէր հստակեցվել հայցադիմումի մեջ):

Հակառակ պարագայում պետք է միանշանակ մերժվեր նյութական (դրամական) պահանջը:

Պարզագույն այս կանոնակարգումները նույնպես ամենտեղ Անահիտ Թումանյանը եւ հայցվորին նվիրեց 180 հազար դրամ:

Այն օրերին, երբ ՂԱԳԿ-ի հետ քննարկվում էր Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. ապրիլի 2-ի վճռի կատարման հարցը, մենք նույն դատարանից պահանջեցինք վճռի պարզաբանում: Սակայն վճռի պարզաբանման առաքելությունը դարձյալ վստահիվեց Անահիտ Թումանյանին: Մենք ինքնաբացարկ հայտնեցինք դատավոր Անահիտ Թումանյանին՝ հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածը, ըստ որի՝ մեզ մտո կարողամիտ կասկած նրա անկողմնակալության մեջ, սակայն, դատավորը, կրկին օգտվելով իր պաշտոնական դիրքից, մերժեց մեր միջնորդությունը: Մենք էլ գերադասեցինք հրաժարվել դատավճռի պարզաբանումից, որպեսզի գործ չունենանք այդ դատավորի հետ:

Մեկ ուրիշ գործի առիթով 2015թ. սեպտեմբերի 8-ին կրկին բացարկ հայտնեցինք Անահիտ Թումանյանին: Դրանից առաջ՝ նույն գործով գրված մեր պատասխանի մեջ, կոչ էինք արել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Սամվել Գրիգորյանին՝ Անահիտ Թումանյանին հնարավորինս զերծ պահել Կապանին առնչվող հայցադիմումները քննելուց, քանի որ ոչ բոլոր դեպքերում է կարողանում անձնական ու կլանային շահերը ստորադասել Հայաստանի Հանրապետության շահերին:

Այսօր էլ նման կոչով դիմում ենք դատարանի նախագահին:

Չէ՛, մի՛ կարծեք, որ դատավոր Անահիտ Թումանյանն ունի գիտելիքների սակավության խնդիր, որ նրա իմացության դաշտում երաշտ է: Անահիտ Թումանյանի մոտ ակնհայտորեն բացակայում է անձնական մոտեցումները, նախապաշարումները եւ արդարադատության սկզբունքները միմյանց հետ չլիտթելու կամքը:

Մերժվածների սալոն

# Թշվառականը

### Մարզկենտրոնի հայտնի առլեկինը՝ կրկին ինքնապահպանման խնդրի առաջ

Իմաստուն մարդ էր Իվան Պավլովը: Աշխարհահռչակ այդ ֆիզիոլոգը դեռեւս 20-րդ դարասկզբին էր հայտնագործել, որ կատվազգիների ընտանիքի որոշ տեսակների աչքին (մարտողության համակարգում սպիրտի թեթեւակի ներազդեցությամբ կատարված խանգարումների դեպքում) բանական մարդը երեւում է շան տեսքով, եւ կատվազգիների ընտանիքի այդ ներկայացուցիչը սկսում է տարօրինակ վարք դրսեւորել: Պավլովը բացատրում էր, որ նշված մուտացիան պայմանավորված է բացառապես տեսակի պահպանությամբ, ինքնապաշտպանության բնագոյով: Պավլովը գոյուզացնում էր նաեւ, որ նման այլափոխությունը բացառիկ դեպքերում կարող է փոխանցվել սովորական մարդուն եւ ունենալ տարբեր արտահայտություններ: Եվ ահա աշխարհահռչակ ֆիզիոլոգի կանխատեսման մեկ դեպք (կանխատեսումից հարյուր տարի անց) արդեն իսկ ունենք...

Բակային գործածության այդ «կրետինը» մեր թերթի երկու հոդվածի մի քանի նախադասություն (չգիտենք՝ ինչու) իրեն հղած «մեխի» է համարել (այդ հոդվածների բովանդակությանը քիչ հետո կանդիդատուրան) եւ դրանց արձագանքելու (իր դաստիարակությանը խիստ համահունչ բառաթերթով) վարժանք ձեռնարկել՝ զրահավորված իր ունեցած միակ գենով՝ տեղայնամտությամբ, ու մեզ անվանել (ոչ ավել, ոչ պակաս) շուն, շան որդի՝ բայց եւ խուսափելով այդ վայրահաշույթան տակ իր ստորագրությունը դնելուց:

Ասենք անմիջապես՝ ընթերցումով ենք մոտենում մարզկենտրոնում հայտնի առլեկինի մկավոցին եւ չենք զարմանում: Նույնիսկ խոշուն ենք նրան, որ ինչոր դանապաղի օգնությամբ անգամ չի հաջողել պատճառաբանված, փոխկապակցված, համոզիչ խոսք ասել: Չենք էլ ուզում իջնել եւ արձագանքել նույն ոճով՝ գերադասելով գնալ մեր ճանապարհով...

Ի՞նչ է, ի վերջո, տեղի ունեցել, որ այդպես վրդովվել-վշտացել է թուչի տղերքից մեկը:

«Այոնյաց երկիրը» ս.թ. հուլիսի 10-ի համարում տպագրել է Կապանի շրջանի գյուղապետերից մեկի արձագանքը՝ մարզկենտրոնում երբեմն-երբեմն լույս տեսնող մի թերթի կոնկրետ հրապարակմանն ի պատասխան: Հեղինակն արձագանքի մեջ նաեւ գնահատականներ է տվել այդ թերթին՝ անվանելով «ճորաթուխ ինչ-որ թերթ», «մեռելածին թերթ» եւ այլն: Հետո պարզվել է, որ սովալ թերթի ծայված հիմնադիրն ու խմբագիրը մեր իսկ հիշատակած ոչ լրագրող ոչնչությունն է, ով էլ իբր վիրավորվել է այդ գնահատականներից ու վայնասուն բարձրացրել, վայրահաշույթան սկսել ոչ թե հողվածագրի, այլ «Այոնյաց երկրի» խմբագրի հասցեին՝ նկատի ունենալով (ամենայն հավանականությամբ), որ նման մկավունն այս օրերին կարող է դուր գալ ոմանց:

Այնուհետեւ՝ «Այոնյաց երկիրը» նշված համարում Սամվել Ալեքսանյանի հեղինակությամբ հրապարակվել է մի ռեպլիկ՝ «Վտանգավոր անմոսալիս. տեղայնամտությունը՝ մարտնչող տգետների նոր հանգրվան» վերնագրով: Ռեպլիկը գրելու համար առիթ էր ծառայել մարտնչող մի քանի տգետի կողմից (մեկ ձեռքի մատների վրա կարելի է

ճիշտ գրել) հրահրվող հակագործության հիստորիան (այդ ռեպլիկը, իմիջիայլոց, բազմաթիվ հիացական արձագանքներ է առաջ բերել Կապանում, իսկ Գորիսից, Մեղրուց եւ Սիսիանից գրավոր կարծիք-մտահոգություններ ենք ստացել): Մեր ռեպլիկում նաեւ այսպիսի պարբերություն է տեղ գտել. «...Ավելի վաղ բակային մի գործիչ (Պարսկաստանից Կապան ներգաղթած հայ շինականի շառավիղ) կարգախոս էր հնչեցրել՝ «Կապանը՝ կապանցիներին»: Եվ մոլորյալ այդ հեղինակությունն այդպես էլ չի հասկացել, որ հռչակված կարգախոսն ու մարզկենտրոնի կարգավիճակն անհամատեղելի են»: Ու հայտնի ունայնությունը, պարզվում է, այդ դիտարկման թիրախն իրեն է համարել ու մռնալ սկսել: Թերթային նշված երկու հրապարակման մեջ տեղ գտած միանգամայն անկեղծ եւ տեղին այդ մտքերն էլ պատճառ են դարձել, որ թշվառականը փրփրաբերան հայիտի տողերիս հեղինակին: Ուշադրություն դարձրեք՝ ոչ թե քննարկել է գրվածը, հակադրել, հերքելու փորձ արել, այլ վայրահաշել...»

Մենք պատրաստ ենք ցանկացած լսարանում բանական մարդկանց հետ քննարկել այդ հրապարակումները: Մինչ այդ, սակայն, մեր խոսքն ենք ուղղում ոչ լրագրող այդ ոչնչությանը:

Դու վախկոտ ես ու ճորտ, քանզի խուսափել ես հանրությանը ներկայանալ սեփական անուն-ազգանունով, քանզի տեսական ժամանակ թաքցրել ես, որ թերթի հիմնադիր ես ու մի շարք վայրահաշույթան-խաբուս-հողմածների ծայված պատվիրատու (փորձել ես ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանել, կամ, միգուցե, ամաչել ես սեփական անուն-ազգանունով ներկայանալ): Դու վախեցել ես հակադարձել այն մարդուն, ով քո հիմնադրած թերթն անվանել է «մեռելածին» եւ հայիտել ես մեկ ուրիշի, ում հայիտելու համար (քո պատկերացումներում) հնարավոր ես համարել, որ ոմանք որկրամոլությամբ երանության մեջ գցող ինչ-որ բան կարող են ես մի հնարավորություն կընծեռնեն քեզ:

Դու անգրագետ ես եւ լրագրողի անվան տակ թաքցնող, քանի որ քո եւ քո դանապաղի մի քանի տողանոց վայրահաշույթան մեջ տասնյակ ուղղագրական եւ կետարարական սխալներ կան միայն: Եվ դա այն դեպքում, երբ քան տարի շարունակ, օրերից շարված լինելով, քանիցս փորձել ես ցույց տալ, որ կարող ես նաեւ լրագրող լինել, ինչն այդպես էլ թեզ չի հաջողվել:

Դու անաբուռ գոյություն ես, քանի որ մարզկենտրոնի ավագանու վերջին ընտրություններում կապանցիներ քեզ մերժեց դաժան ձեւով (17365 քվեարկողից ստացար 244 ձայն), իսկ դու, այդքանից հետո ես գետինը մտնելու փոխարեն, մերժվածիդ իրավունք ես վերապահելով խոսել բոլոր կապանցիների անունից:

Դու կնոջ փեշի տակ թաքցնող ես: Հիշիր, երբ քեզ դուրս շարտեցին Կապանի քաղաքապետի տեղակալի պաշտոնից, տեսական ժամանակ հրաժարվում էիր պատասխանել լրագրողներիս հեռախոսազանգերին՝ խուսափելով (ամաչելով) պատասխանել, թե ինչու ես քեզ վրնդել քաղաքապետարանից: Հեռախոսազանգերին, քո փոխարեն, պատաս-

խանում էր կինը, եւ դու դա հանդուրժում էիր: Ու մինչեւ այժմ (երկու տարի շարունակ) չես էլ պատասխանում շատերին հետաքրքրող այդ հարցին: Այնպես որ՝ նույնիսկ խնամված բեղերդ քո կերպարին խորհրդավորություն ու տղամարդկային արժանապատվություն չեն կարող հաղորդել:

Դու գավառամտության բացառիկ գտածո ես: Իբր ինձ վիրավորելու համար (չկարողանալով կոնկրետ փաստարկներով հակադարձել գրվածքին) հեզմանքով նշում ես ծննդավայրիս անունը՝ Յայջի, Հարժիս: Ի դեպ, ամենից շատ դրանից չենք վիրավորվում՝ տեղյակ լինելով, որ Այոնիցի գյուղերի անունները հեզմանքով են օգտագործել (եւ օգտագործում) բացառապես մեզ քաջածանոթ այլազգիներն ու այլադավանները: Այնպես որ Հարժիսի (Յայջիի) եւ սյունիքյան մյուս գյուղերի ու քաղաքների մասին հարգանքով ու պատկառանքով խոսելու համար պետք է առնվազն ու նախաառաջ յոթ պորտով հայ լինել ու քրիստոնյա: Այնպես որ քեզ հասկանում ենք...

Այդ բոլորով հանդերձ՝ ուզում ենք ընթերցողին տեղյակ պահել մեր գործելակերպի մեկ այլ առանձնահատկության մասին՝ հաստատված մեր տասնամյա ընթացքով: Մենք միշտ էլ հավատարիմ ենք եղել լրագրողական համքարության չգրված օրենքներից մեկին՝ ձեռնպահ մնալ որեւէ պարբերականի, որեւէ լրագրողի մասին քննադատական խոսք ասելուց, թեւ բազում առիթներ են եղել ու կան: Ավելին, սերտ համագործակության մեջ ենք եւ Սիսիանում ու Գորիսում, եւ հանրապետության մայրաքաղաքում ու շրջաններում հրատարակվող թերթերի ու ամսագրերի եւ նրանց լրագրողների հետ: Ուղղուն է ուղջունելու ենք ցանկացած լրատվամիջոցի ծնունդ, բացախության (եւ ոչ թե վայրահաշության) ամեն մի դրսեւորում, եթե անգամ խոսքի թիրախը մենք ենք, որովհետեւ ազատ խոսքն իրապես մեր պետական ու ազգային հուսալի ընթացքի գլխավոր եղանակներ ենք: Օրինակ ես ընմարտել Սամվել Ալեքսանյանին եւ անգամ վճարովի հարթակ չեն գտել Երեւանում, բայց մեր թերթում այդ մարդկանց էջ ենք տրամադրել, ովքեր էլ բանակնվել են խմբագրի հետ, քննադատել նրան. այդ գործելակերպն այսօր էլ շարունակում ենք:

Եվ ուրեմն՝ առաջնորդվելով ազատ խոսքի (բացախության) սկզբունքով, անհրաժեշտ ենք համարում մի հարց էլ ուղղել մեծահարգ Արտուր Աբախյանին՝ Կապանի նախկին քաղաքապետին, թեւ ինքն առայժմ շարունակում է հրաժարվել հրապարակային խոսքից:

Պարոն Աբախյան, գոնե ուշացումով կարո՞ղ ենք իմանալ, թե ինչու երկու տարի առաջ աշխատանքից հեռացրիք Կապանի քաղաքապետի տեղակալին: Դուք միշտ էլ պատշաճ բեք համարել խոսել այդ մասին, բայց դա չի օգնել, որ թեմայի շուրջ ասեկոսենք սպառվեն: Եվ փոխքաղաքապետի պաշտոնանկության շուրջ առայսօր շրջանառվում է մի քանի ասեկոսե: Ահավասիկ՝ ա) իբր Չեզ փոխարինելու ընթացքում նա ֆինանսական բնույթի խարդախություններ է կատարել քաղաքում այդ ժամանակ կառուցվող խաղաղապարակների կատարողականակտերը հաստատելիս եւ համայնքի միջոցներից գողություն կատարել, ինչը Դուք մեծահոգաբար չեք տեղափոխել իրավական դաշտ, բ) իբր քաղաքապետարանի իր աշխատասենյակը պարոնը դարձրել էր հայտնի տարվուհիների խրախճանքի վայր, գ) իբր անկարող էր (հայտնի պատճառով) առավուտները ժամանակին քննից արթնանալ եւ աշխատանքի էր հաճախում կեսօրից հետո:

Միգուցե այդ ամենը հերյուրանք է (եւ չենք բացառում): Միգուցե նրան հեռացրել եք բոլորովին այլ պատճառով: Բայց, խոստովանենք, եթե ժամանակին հանրությանը ներկայացվել փոխքաղաքապետի պաշտոնանկության պատճառը, ապա ոչ մի ասեկոսե էլ չէր ծնվի: Մինչդեռ չի բացառվում, որ կծնվեն այլ վարկածներ եւս, եթե շարունակեք լռություն պահպանել:

Եվ վերջում՝ մեր ընթերցողին: Եթե հայտնի առլեկինի աչքում ես շուն եմ, ապա (թող ընթերցողը ների եվրոպական մեծ բանաստեղծ Հայնեին կրկնելու համար) «Ես իմ հայրենիքի շունն» եմ, եւ այդ «շունն» ունի հստակ առաքելություն՝ հնարավոր բոլոր միջոցներով թույլ չտալ, որ տեղայնամտությունը իբրեւ կենսակերպ դարձրած ոմն հարբեցող բողբոջի, ծլարծակի սյունիքյան որեւէ համայնքում, որ գավառամտության դրող ծածանող ամեն մի արարած հնարավորինս շուտ նետվի պատմության աղբանոց: Այո՛, շարունակում ենք մնալ կարծիքին, որ տեղայնամտությունը միշտ էլ հայրենիքի զգացողությունից զուրկ մոթթապաշտ տականքի հանգրվանն է եղել:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
**«Այոնյաց երկիր», N22 (295),**  
**3 սեպտեմբերի 2013թ.**

## Շեքուն

«Այոնյաց երկիր» թերթի 2013թ-ի սեպտեմբերի 3-ի տպագիր հրապարակված «Թշվառականը: Մարզկենտրոնում հայտնի առլեկինը՝ կրկին ինքնապահպանման խնդրի առաջ: Մերժվածների սալոն» հոդվածում ներկայացված տեղեկություններն այն մասին որ «Թեզ դուրս են շարտել եւ վռնդել Կապանի քաղաքապետի տեղակալի պաշտոնից» եւ որ «փոխքաղաքապետի պաշտոնանկության շուրջ առայսօր շրջանառվում է մի քանի ասեկոսե: Ահավասիկ ա) իբր քաղաքապետին փոխարինելու ընթացքում նա ֆինանսական բնույթի խարդախություններ է կատարել քաղաքում այդ ժամանակ կառուցվող խաղաղապարակների կատարողականակտերը հաստատելիս եւ համայնքի միջոցներից գողություն կատարել, իբր քաղաքապետարանի իր աշխատասենյակը պարոնը դարձրել էր հայտնի տարվուհիների խրախճանքի վայր, իբր անկարող էր (հայտնի պատճառով) առավուտները ժամանակին քննից արթնանալ եւ աշխատանքի էր հաճախում կեսօրից հետո» չեն համապատասխանում իրականությանը:

\* \* \*

Ներողություն ենք խնդրում Գագիկ Վոլոյայի Ղահրամանյանից՝ դատարանի կողմից վիրավորանք գնահատված հետեւյալ՝ «Բակային գործածության այդ կրետինը», «Մարզկենտրոնում հայտնի առլեկի մկավոցը», «Ոչ լրագրող ոչնչությունը, ով վայնասուն է բարձրացրել, վայրահաշել սկսել», « Ու հայտնի ունայնությունը», «Թշվառականը», «ոչ թե քննարկել է, այլ վայրահաշել է» արտահայտությունների համար:

**Սամվել Ալեքսանյան**

**Ծանոթություն**  
Խմբագրությունը պատասխանատվություն չի կրում ներկայացվող նյութերում տեղ գտած վրիպակների ու աղավաղումների համար. երկու տեքստն էլ հաստատված է դատարանի վճռով:

## Հաղթանակներ միջազգային եւ հանրապետական մրցումներում

### Մարզական

Չորս ոսկի, մեկ արծաթ. մեդալների այսպիսի ավարով հոկտեմբերի 21-ից 24-ը խարկով քաղաքում կայացած քիթ բոքսինգի «WPKA» վարկածով Ուկրաինայի դպրոցականների բաց առաջնությունից վերադարձան Այոնիցի մարզի «Գարեգին Նժդեհ» ակումբի սաները (մարզիչ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան): Արտուշ Ավետիսյանը (50 կգ քաշային կարգ), Երիկ Մարտիրոսյանը (30), Արայիկ Ավետիսյանը (մինչեւ 35 կգ), Կարեն Գալստյանը (40 կգ) բարձրագույն պատվով պատվանդանի առաջին աստիճանին եւ արժանացան ոսկե մեդալի, իսկ Վաչե Գյուլբուրդյանը (25 կգ) եղավականում պարտություն կրեց եւ բալարարվեց արծաթե մեդալով: «Գարեգին Նժդեհ» ակումբը պարգևատրվեց գավաթով եւ պատվոգրով՝ լավագույն տեխնիկատակտիկական պատրաստվածության



համար: Առաջնության կազմակերպիչները «ՋՊՄԿ» ՓԲԸ վարչական տնօրեն Վահե Հակոբյանին արժանացրին դիպլոմի՝ առաջնության մասնակցության նպատակով ակումբին հովանավորելու համար: Ակումբի մարզիչն ու սաները մրցումների ավարտից հետո շնորհակալություն հայտնեցին խարկովի հայ համայնքի ղեկավար Սամվել Խանդանյանին:

Հոկտեմբերի 28-ին ակումբի մարզիչն եւ նրա մրցանակակիր սաներին ավանդական գունճա-դիոնով դիմավորեցին Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում («Գարեգին Նժդեհ» ակումբը մարզվում է կրթօջախի մարզադահլիճում):

Դեռ հաղթանակի բերկրանքը չէին հասցրել լիովին վայելել, երբ մրցման մեկնեցին մայրաքաղաք՝ մասնակցելու «90 տարի ձեր կողքին» խորագրով «Դինամո» մարզական հասարակական կազմակերպության 90-ամյակին նվիրված քիթ բոքսինգի բաց առաջնությանը: Այս անգամ մրցմանը մասնակցեցին ակումբի ավելի կրտսեր տարիքի սաները, ինչը նրանց համար մրցափորձ ձեռք բերելու լավ հնարավորություն էր: Եվ նրանք հուսախաբ չարեցին: Նրանցից չորսը՝ Դավիթ Բաբախանյանը, Վաղարշակ Բաղայանը, Շավարշ Դավթյանը, Նոյ Անտոնյանը, դարձան հաղթող, իսկ Ալեն Դավթյանը եւ Վահե Գալստյանը՝ երկրորդ մրցանակակիր: «Հայաստանում եւս թե՛ մրցակցություն է լինում, բոլոր ցանկանում են մղկանալ տանել իրենց հայրենի քաղաքը, գոհ են տղաների մրցելությունից», - ասաց ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանը:

**ՎԱՐՍՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

# ՀՀ գյուղատնտեսության նախարարն այցելել է Սյունիքի մարզ

**ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նոյեմբերի 6-ին աշխատանքային այց է կատարել Սյունիքի մարզ: Նախարարին ուղեկցում էին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» տնօրեն Գագիկ Խաչատրյանը, «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը:**



Այցի սկզբում նախարարն այցելել է Տոլորս համայնք, գրուցել համայնքապետի եւ բնակիչների հետ, ծանոթացել նրանց հուզող խնդիրներին: Գյուղացիները նախարարի հետ զրույցում հատկապես կարեւորել են գյուղատնտեսական մթերքների իրացման հարցը, մասնավորապես չեչտադրել մսի, կաթի մթերման ցածր գների խնդիրը, ինչպես նաև բարձրագույն մթերման դիմաց կատարվող վճարումների հարցը: Տոլորսի բնակիչներին մտահոգում էր նաև գյուղատնտեսական մշակվածությունը, ինչը խոչընդոտում է գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին եւ որակով կատարմանը:

Արձագանքելով մթերման հետ կապված հարցին՝ նախարարը մասնավորապես նշել է, որ ընթացիկ տարին աչքի է ընկել բերքի առատությամբ, ինչը հատկապես խաղողի մթերման հետ կապված որոշակի դժվարություններ առաջացրեց, որոնց սակայն նախարարությունը հրճեց օպերատիվ լուծումներ է տվել եւ արել է հնարավոր խնդիրները կարգավորելու համար: Նախարարի խոսքով՝ պարենային մի շարք արտադրանքների (ցորեն, կաթ) ցածր գները միջազգային տեղեկանքներով են պայմանավորված եւ ժամանակավոր բնույթ են կրում:

Նախարարը հայտնել է, որ բոլոր մարզերում, այդ թվում՝ նաև Սյունիքում, նախատեսում են կառուցել սպանդանոցներ, որոնք կնպաստեն մսի իրացման խնդրի լուծմանը, ինչպես նաև տեղերում պետք է ստեղծվեն վերամշակման փոքր արտադրամասեր, որոնք էապես կթեթևացնեն գյուղմթերքի իրացման հոգսերը:

ման հոգսերը:

Հանդիպման ընթացքում համայնքի բնակիչները ցանկություն են հայտնել ընդգրկվել «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագրում, ինչը հնարավորություն կտա ջրարբիացնել հեռագնա շուրջ 1300 հա արոտները: Նախարարը նշել է, որ ծրագրի պատասխանատուներին արդեն իսկ հանձնարարված է ուսումնասիրություններ իրականացնել խնդրի առնչությամբ:

Գյուղացիների հետ զրույցում նախարար Կարապետյանը հորդորել է գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնել, ինչը թույլ կտա առավել արդյունավետ կազմակերպել աշխատանքները եւ կնպաստի գյուղացիների եկամուտների ավելացմանը: Նախարարի խոսքով՝ արդեն հանրապետությունում 100-ից ավել կոոպերատիվներ են ստեղծվել, եւ արդյունքները գոհացուցիչ են:

Նախարարը նաև հավաստիացրել է, որ մատչելի գներով սերմացուի, պարարտանյութի, դիզվառելիքի եւ սուբսիդավորվող վարկերի տրամադրման պետական աջակցության ծրագրերը ՀՀ նախագահի հանձնարարությամբ 2016 թվականին եւս կշարունակվեն:

Այնուհետև նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Սյունիքի

Ծղուկ համայնքում գործող «Բորիտվակ» ՍՊԸ-ի պանրի արտադրամասը: Ընկերության տնօրենի տեղեկացմամբ իրենք համագործակցում են մարզի 6 համայնքների ավելի քան 150 ֆերմերների հետ, օրական վերամշակում են 9.000 լիտր կաթ, արտադրում են կարագ եւ 7 տեսակի պանիր, որից 3-ը՝ եվրոպական մոցարելա, կամամբեր, ռիկոտա: Նրա խոսքով՝ առաջիկայում նախատեսվում են ընդլայնել տարածքները եւ շուրջ երեք անգամ ավելացնել արտադրության ծավալները: Նախարարը, գոհունակություն հայտնելով կատարված աշխատանքներից, հավելել է, որ ընկերությունը կարող է մասնակցել նաև ՀՀ ԳԾԻԳ ծրագրի արժեշտային զարգացման բաղադրիչի դրամաշնորհային մրցույթին եւ պայմաններին բավարարելու դեպքում ստանալ մինչեւ 50 հազար ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհ կարողությունների հզորացում, սննդամթերքի անվտանգության հարցերի բարելավման եւ արտահանման հնարավորությունների ավելացման նպատակով՝ նույն չափով ներդրում իրականացնելու պայմանով:

Նրա կարծիքով՝ այս մարդիկ պատշաճ ուշադրության չեն արժանանում, գրեթե ոչ մի անհատ կամ կազմակերպություն երբեք էլ Քաջարանում մեծ նախաձեռնությամբ հանդես չի եկել:

Ողջ ժամանակահատվածում նրանց հետ է եղել Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը, ով նաև օրհնության կարգ կատարեց Տաթևի վանքում՝ ողջունելով մեծատիպ միջոցառումների անցկացումը:

Բարի գործը չի կատարվում շահամոլությունից կամ էլ ցուցամոլությունից ելնելով, այլ միայն սիրուց եւ շրջապատի հանդեպ ունեցած հոգատար վերաբերմունքից: Կարծում ենք՝ Արթուր Ստեփանյանի կատարած գործը շատերի համար օրինակելի կլինի:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Կենսաթոշակի տարիքի հասած ուսուցիչներն աշխատանքից ազատվում են սեփական դիմումի համաձայն

**Կենսաթոշակային տարիքի հասած աշխատողների իրավունքներին վերջերս անդրադարձել էինք (Սյունյաց երկիր, №24, 18 սեպտեմբերի 2015թ.)՝ խոստանալով հատկապես հանրակրթական դպրոցների ուսուցիչների կենսաթոշակի անցնելու թեմային եւս մեկ անգամ անդրադառնալ:**

Մարզպետարանի կրթության բաժնի պետ Հայկ Հարությունյանը նշեց, որ այդ հարցում չի կարելի միանշանակ զեահատական տալ՝ մեղադրելով միայն գործատուներին: Ներկայումս մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 163 կենսաթոշակառու, որից 52-ը՝ ուսումնաստանողական աշխատող: Հիմնական աշխատող ուսուցիչները նրանք են, որոնց այս պահին փոխարինող կարող չկան: «Հատկապես «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Աշխարհագրություն» առարկաների մասնագետների կարիք կա: «Շախմատ» առարկան հիմնականում դասավանդում են վերապատրաստված մասնագետներ, որոնց համար տարիքային սահմանափակում չի կիրառվում: Ձիճղիների համար տարիքային սահմանափակում գրեթե չի գործում՝ ելնելով նաև առարկայի առանձնահատկությունից: Հաճախ կենսաթոշակի անցած ուսուցիչները, ծնողների խնդրանքով, հաշվի առնելով նրանց փորձը, գիտելիքները, շարունակում են աշխատել: Օրենքը չի արգելում նրանց աշխատել, միայն թե նրանց հետ կնքվում է ժամկետային պայմանագիր»:

Այն նկատառմանը, որ դպրոցի տնօրենն է պայմաններ ստեղծում՝ ժամով չապահովելու հարցում, բաժնի պետն առարկեց. «Եթե դպրոցում ժամաքանակի պակաս է լինում, սպաս նախեստաջ ապահովվում են ոչ կենսաթոշակային տարիքի ուսուցիչները: Միուցե նախանցյալ տարի ժամաքանակի խնդիր չի եղել, եւ կենսաթոշակի անցած ուսուցիչն էլ է պահովվել ժամաքանակով, բայց այս տարի շատ դպրոցներում այդ խնդիրն առաջացել է՝ պայմանավորված աշակերտների թվի նվազմամբ»:

Ենթադրելով, որ դպրոցներում կան, որտեղ կենսաթոշակառուները գերակշռում են, որին հակառակ՝ այս ուստարում որոշ դպրոցներից միանգամից մի քանի կենսաթոշակառու, սեփական դիմումի համաձայն, աշխատանքից ազատվել է (խմբ. լինում են դեպքեր, երբ նրանք հրաժարվում են դիմում գրել. հարց է առաջանում՝ ինչո՞ւ): Ծանուցումը, որ նախապես ներկայացվում է, հաճախ ուսուցիչները հրաժարվում են վերցնել:

Ընդհանուր առմամբ թող այն կարծիքը չստեղծվի, որ դեմ ենք սերնդափոխությանը, նորավարտ կարգերը նույնպես պիտի աշխատեն. չէ՞ որ տարեկան մի քանի տասնյակ նորավարտ մանկավարժներ են տալիս բարձրագույն ուսումնական հաստատությունները: «Ինչ վերաբերում է նորավարտ կարգերի գիտելիքներին, սպաս չափազանցություն կլինի, եթե սեսն, որ բոլորն էլ հիանալի մասնագետներ են, բայց նրանց մի զգալի մասը շատ պատրաստված է, ավելին, քան կենսաթոշակառուները», - նշեց

բաժնի պետը: Այս հարցի մասին խոսեցինք նաև արդեն աշխատանքի վետերան Արկադի Հարությունյանի հետ, ով գրեթե վեց տասնամյակ աշխատել է, բայց դեռ ուժ ու եռանդ ունի, առողջական վիճակը լիովին բավարար է՝ մանկավարժական գործունեություն ծավալելու համար: Նրանց ուժերը հարկավոր է օգտագործել: «Ես այն համոզման եմ, որ աշխատանքի վետերանները, եթե ի վիճակի են աշխատելու, պիտի իրենց հարուստ փորձը շարունակեն փոխանցել երիտասարդներին: Բացի դրանից՝ մեզանում աշխատանքի վետերաններին անհրաժեշտ մեծաբանի չեն արժանացնում, հանդիպումներ չեն կազմակերպվում նրանց հետ: Երբեմն այն տպավորություն է ստեղծվում, որ եթե արդեն կենսաթոշակառու է, ուրեմն նրա գործը միայն այս կյանքին հրաժեշտ տալն է մնում»:

Հիշելով խորհրդային տարիները՝ Ա.Հարությունյանը նշեց, որ շատ կարեւոր է նաև կենսաթոշակառուների զբաղվածության, ժամանցի կազմակերպման խնդիրների լուծումը: Նախկինում, օրինակ, Գյումրիում կար աշխատանքի վետերանների զբաղվածության կենտրոն, որտեղ նրանք իրենց ժամանակն էին անցկացնում՝ զուգահեռաբար զբաղվելով նաև իրենց մասնագիտությամբ: Գաղտնիք չէ, որ այսօր շատերս որակյալ արդյունք ստանալու համար դիմում ենք տարիքով, փորձառու մարդկանց: Կարելի է, օրինակ, քաղցրահամ մսն արհեստանոց բացել եւ ներգրավել աշխատանքի վետերաններին:

«Սերնդափոխությունը, իհարկե, անհրաժեշտություն է, բայց երիտասարդներին պիտի համապատասխան միջոցներով ապահովեն, արտոնյալ պայմաններ ստեղծեն: Նորավարտ կարգին պիտի գործուղեն, պետությունը պիտի աշխատանքի տեղավորի, այլ ոչ թե այդ հարցը լուծվի ինքնատեղավորմամբ, որ հաճախ կատարվում է զարտուղի ճանապարհով», - նշեց բազմամյա մանկավարժը:

Բաժնի պետը մի դիտարկում էւս ներկայացրեց. եթե նույն կենսաթոշակային տարիքի մանկավարժին առաջարկում են գնալ գյուղական դպրոցում աշխատել, նա հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ առողջական վիճակը չի բավարարում, այս դեպքում հարց է առաջանում՝ բա քաղաքային դպրոցում ինչպե՞ս են ուզում աշխատել, եթե առողջական խնդիրներ ունեն:

Գյուղական դպրոցում աշխատելու մասին Արկադի Հարությունյանը նշեց. «Գյուղական դպրոցի խնդիրն այլ է: Պարասյուն ես, ասենք օրինակ, 20 դասաժամ, բայց վարձատրվում ես 10 ժամի համար: Ես պահանջեցի, որ ինձ ցույց տան այդ օրենքը, բայց քանի որ մեծան օրենք չկա, լրեցին: Ի՞նչ նշանակություն ունի, թե ուսուցիչը 4 աշակերտի համար է ամբողջ 45 րոպե դաս պարասյուն, թե՞ 24: Բնական է, որ շատերը հրաժարվում են այնտեղ աշխատել»:

Ինչ վերաբերում է վաստակած հանգստի մեկնող ուսուցիչներին հավուր պատշաճի ճանապարհելուն, Հայկ Հարությունյանը նշեց, որ համարյա բոլոր դպրոցներում էլ ձգտում են մեծարելով ճանապարհել իրենց բազմամյա աշխատակիցներին. այլ հարց է, որ երբեմն նրանք հրաժարվում են մասնակցել այն միջոցառումներին, որոնք կազմակերպվել են նաև նրանց պատվին:

Արկադի Հարությունյանն այն կարծիքին է, որ առհասարակ աշխատանքի վետերաններն ըստ արժանվուն չեն գնահատվում, հաճախ նրանց գոյության մասին չեն էլ հիշում, բայց չէ՞ որ նրանք մեծ ներդրում են ունեցել մեր երկրի տարբեր բնագավառների զարգացման գործում:

## Ուխտագնացությունն Տաթևի վանք

**Հասարակության մեջ կան խոցելի խմբեր, որոնք մշտապես առանձնահատուկ ուշադրության կարիք ունեն: Եվ ինչքան էլ պնդենք, որ նրանք կառավարության, հասարակության ուշադրության կենտրոնում են, իրականությունն այլ պատկեր է ներկայացնում:**



Տաթևի վանք: «Քաջարանի հաշմանդամներից, ծնողազուրկ եւ սոցիալապես անապահով ընտանիքներից ընտրելով 15 հոգու՝ որոշեցի տանել Տաթևի վանք: Չեմ դիմել ոչ քաղաքապետարան, ոչ պղնձամուկիթեմային կոմբինատ, ցանկացել եմ անձնական միջոցներով կազմակերպել արշավը: Բնական է, որ հատկապես հաշմանդամների հետ տեղափոխման դժվարություններ են առաջացել, բայց ուխտագնացությունը հաջողությամբ է անցել», - նշեց Արթուր Ստեփանյանը, ով տեղեկացրեց, որ շարունակական է լինելու այս նախաձեռնությունը, եւ հաջորդ կանգառը լինելու է Գյում-

Քաջարանի բնակիչ Արթուր Ստեփանյանը, ով «Ինձո Արմենիա» եւ «Նաիրի ինչուրամս» ապահովագրական ընկերություններում աշխատում է գործակալ, հոկտեմբերի 23-ին սեփական նախաձեռնությամբ եւ միջոցներով կազմակերպեց ուխտագնացություն

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մեղրու փարածաշրջանային հիվանդանոցի շենքը պապրասպ է շահագործման

1 Գրող Ջեյմս Կոլլինսը՝ Գրողականության և Գրականության Գիտությունների Գիտաբանական կոնգրեսի ղեկավարը, իրականացվող կարևորագույն ծրագրի շրջանակում կառուցված շենքը նկուղիի հետ միասին եռահարկ տիպային կառույց է՝ նախատեսված համեմատաբար փոքր տարածաշրջանի համար՝ 60 մահճակալանոց, վերելակով: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Մեղրու ճՇՇ» ՍՊԸ-ն՝ որպես ենթակապալառու կազմակերպություն (կապալառու՝ «Պառնեք-գազ» ՍՊԸ): Հիվանդանոցում գործելու են ֆիզիոթերապիստներ, ընդհանուր փրկարարական, ընդհանուր թերապևտիկ, վերակենդանացման, մանկաբարձագինեկոլոգիական, ինֆեկցիոն բաժանմունքներ, վիրահատական եւ ծնարանային բուժօգնություն, լաբորատորիա եւ այլն: Շենքը կառուցվել է նախագծին համապատասխան: Ինքնուրույն է հասել, ջեռուցումը հարմարեցված է երկու տարբերակի համար՝ գազով եւ դիզելային շենքով: Քանի որ Մեղրու տարածաշրջանը գազիֆիկացված չէ, առայժմ ջեռուցումը կկատարվի

Շենքի շրջակայքը բարեկարգված է, կանաչապատ, բայց «տարածքը քամոտ վայրում է, եւ խորհուրդ եմ տվել հետազայում խիտ ծառատունկ կատարել», - նշեց Ա. Գասպարյանը: Ասֆալտապատումից հետո տեղացած անձրեւներն էլ ավելի նպաստեցին ջրահեռացման համակարգի հարցի կարգավորմանը: Բնականաբար, տեղումներից կուտակվող ջուրը թափվում է Արաքս գետ, իսկ կոյուղաջրերը մտնում են առանձին մաքրման կայան, որտեղ մշակվում են եւ նորից օգտագործման համար պիտանի դառնում: Նմանատիպ մաքրման կայանների կիրառումը ՀՀ-ում լայնորեն տարածում է գտնում եւ ջրային ռեսուրսների աղտոտումը կրճատելու առաջին քայլերից է: Տնօրենի փոխանցմամբ՝ ամենակարեւորն այն է, որ ջուրը շենքից ամբողջովին հեռանում է:

Շենքի նկուղային հարկը նախատեսված է արտակարգ իրավիճակների համար: Հիվանդանոցը կհագեցվի նորագույն տեխնոլոգիական սարքավորումներով, կահույքով: «Հիմնական խնդիրն այն է, որ հիվանդանոցը համալրվի լավագույն կադրերով, այն ծառայի իր հիմնական նպատակին», - նշում է Ա. Գասպարյանը:

Ըստ շինաշխատանքների ավարտական ակտի՝ ընդհանուր ծախսվել է 1 մլրդ 155 մլն 679 հազար 113 դրամ, բայց դեռեւս կան չլուծված ֆինանսական խնդիրներ (մոտ 60 մլն դրամ): Տնօրենի հավաստմամբ՝ եթե հարցնեն՝ կազմակերպությունը շահույթ հետագայում էլ է այս աշխատանքով, ապա պատասխանը միանշանակ կլինի՝ ոչ:

Տարեսկզբին դրամի արժեզրկումը, բնականաբար, իր ազդեցությունն ունեցավ, բայց նախագծային վերանայում չեղավ: Առողջապահության նախարարության ԾԻԳ-ի եւ կապալառու «Պառնեք-գազ» ՍՊԸ-ի միջեւ կնքված պայմանագրի կետերից մեկի համաձայն՝ երկու կողմի նկատմամբ կարելի է կիրառել ինդեքսավորում, որ մասամբ իրավիճակը մեղմացրեց: Ֆինանսական դժվարություններով հանդերձ, այնուամենայնիվ, այս պահին մնում է միայն էլեկտրականության հարցը լուծել, ենթակայանն արդեն կառուցված է, մնում է հոսանքը հասնի այդտեղ:

Ի դեպ, նշենք, որ շինարարական ծախսերը մեծ մասամբ ծածկված են Իրանի Իսլամական Հանրապետությունից, որ կրճատում էր ժամանակը եւ հեռավորությունը:

«Շինարարական աշխատանքի պատվիրատու ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի հետեւողականությունը, մեր պատասխանատվության զգացումը, այն գիտակցումը, որ Մեղրու տարածաշրջանը պիտի հիվանդանոցի շենք ունենա հնարավորին շուտ, օգնեց մեզ ստանալ այն արդյունքը, ինչի ականեսն ենք մենք այսօր: Մինչ այս շենքն ավելի շատ հռչակվել էինք որպես ճանապարհաշինարար, բայց սա այլ ոլորտ էր մեզ համար: Եթե ճանապարհն անընդհատ ենք կառուցում, ապա, իմ համոզմամբ, սա դարձրեց համար է, կարելի է ասել, մտանք պատմության

էջեր», - հպարտությամբ նշում է Ազատ Գասպարյանը:

Երեսուներկու տարվա հեռավորությունից գնահատելով կատարած աշխատանքները՝ Ազատ Գասպարյանը, այնուամենայնիվ, առանձնացնում է երեք հիմնական գործ, որ պատմության էջերի համար են՝ ՊԵ-ի ավտոհավաքակայանի, Մեղրու տարածաշրջանային հիվանդանոցի շենքի, Կապան-Շավ-Շվանիծոր-Մեղրի միջպետական ճանապարհի կառուցումը: «Եվ մեր ամենաշնորհալի գործը, իհարկե, ճանապարհների ծննդային պահպանությունն է: Արդեն տեղացած ծյունն անակնկալ էր, բայց մենք լիարժեք պատրաստ ենք ծննդը դիմավորելու: Դիբազի լեռնանցքում արդեն շուրջօրյա հերթապահությունն իրականացվում է, ճանապարհը լայնացվել է, տեխնիկայով, ավագով եւ արդով ապահովված ենք, մնում է վարորդների պատասխանատվությունը», - նշեց տնօրենը եւ հավելեց, որ հաճախ ծննդային պահպանությանը խոչընդոտում են հատկապես հայ վարորդները: Համեմատության համար նա նշում է, որ պարսիկ վարորդների կուլտուրան ավելի բարձր է այդ առումով:

Ի դեպ, ճանապարհաշինարարների համար արդեն ավանդույթ է դարձել ճանապարհներից ցայտաղբյուրների կառուցումը:

Խոսելով Մեղրու ճանապարհաշինարարների առաջիկա ծրագրերից՝ տեղեկացանք, որ շինարարական աշխատանքներով են զբաղվում Մեղրու N1 եւ Ազարակի միջնակարգ դպրոցներում, շարունակվում են Մեղրի քաղաքի ներքին ջրատար ցանցի վերանորոգման աշխատանքները, 2016թ. նախատեսվում է եւս 5 կմ ճանապարհատվածի հիմնանորոգում դեպի Մեղրի տանող հատվածում, բայց դեռեւս մրցույթ չի կայացել եւ այլն:

Քանի որ մեր նպատակն ավելի շատ Մեղրու տարածաշրջանային հիվանդանոցի շենքի կառուցմանն անդրադառնալն էր, ուստի այլ աշխատանքների մասին կխոսենք հետագա հրապարակումներում:

Շնորհավորում ենք Մեղրու տարածաշրջանի բնակիչներին և նորակառույցի առթիվ, մարդուն լավագույն կադրերի հոսք դեպի մեր հանրապետության հարավային դարպաս:

**Հ. Գ. Մեղրու նորակառույց հիվանդանոցի հիմնադիր շինությունը չէր կարող անտարբեր թողնել մեզ, եւ մենք անկեղծ շնորհակալություն հայտնեցինք Ազատ Գասպարյանին՝ Մեղրու գեղեցիկ դիմապատկերին եւս մեկ վառ շորիկս ավելացնելու համար:**  
 Ազատ Գասպարյանն էլ եւ շինարարների, եւ մեղրեցիների անունից շնորհակալություն հայտնեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին՝ Մեղրու հիմնադիրների հանդեպ տածած ուշադրության համար. Մեղրում մեր հիվանդանոցի կառուցումը եւս Հայաստանի Հանրապետության նախագահի 2012թ. նախընտրական խոստումներից է, եւ արդեն կարող ենք հայտարարել՝ այդ խոստումը կատարվեց լիարժեքորեն:


**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Արմո Տաթևացին քանդակել է նաեւ Կոնստանտին Օրբելյանի կիսանդրին



Տաթևն է... Սեզ ժայռերի մեջ ծվարել է նա ու, ասես վերելից, Տիրոջ իրավունքով, հսկում է գյուղ այցելողներին:

Մեքենան մի կերպ հաղթահարում է ոլորանները, հեկիհեկ հասնում Տաթև գյուղ ու կանգ առնում ճամփաբաժանին: Մեքենայից իջնում է այցելուն, ձեռքը դնում ճակատին, հպարտությամբ ու կարոտով հայացքն ուղղում աջ ու ձախ: Մի կողմում Այունյաց թագուհին է՝ իր վեհությամբ, իսկ մյուսում՝ հարազատ, մանկության տարիների իր օրրանը՝ Տաթև գյուղը: Նա ասես ամբողջությամբ անհագ ծարավով կլանում է իր լեռների օդը, հեռվից հեռու հայացքով գրկում հարազատ լեռները ու... շարունակում ճանապարհը:



Արմո Տաթևացի Առաքելյանը ծննդավայրում է: Դանդաղ, բայց վստահ քայլերով շարժվում է գյուղ, ճանապարհին ուսումնասիրում ամեն մի քար ու թուփ, բարեուն գյուղացիներին, հալ ու հարցում անում բոլորից ու կրկին շարունակում քայլեր: Քանդակագործի այցը մի քանի առաքելություն ուներ:

Տաթևացին առաջինն այցելեց գյուղի կենտրոն, որտեղ տեղադրված են երկու մեծի՝ Դավիթ Բեկի եւ Կոնստանտին Օրբելյանի արձանները: Նա դանդաղ մոտեցավ նրանց. բարեւեց ու մտովի զրույցի բռնվեց նրանց հետ: Քանդակագործի ձեռքն ակամայից սահեց քանդակների վրայով, ու թվում էր, թե մատների տակ ա՛յ ա՛յ կկենդանանան նրանք:

## Արտակարգ իրավիճակ Սյունիքի մարզում

Նոյեմբերի 7-ին Կապան-Շավ-Շվանիծոր-Մեղրի միջպետական ճանապարհի 41-րդ կմ-ում տեղի ունեցավ քարաթափում, որի հետեւանքները հնարավոր եղավ վերացնել 14 ժամ հետո: Ինչպես տեղեկացրեց «Մեղրու ճՇՇ» ՍՊԸ տնօրեն Ազատ Գասպարյանը, ահազանգ ստանալուց անմիջապես հետո դեպքի վայր է ուղարկվել երկու միավոր տեխնիկա՝ մեկ ավտոբարձրիչ եւ մեկ գրեյդեր: «Չճայած եղանակային անբարենպաստ պայմաններին՝ այնուամենայնիվ հաջողվեց առանց ճանապարհային հատվածի վնասման բացել այն՝ հեռացնելով մոտ 2000 տոննա ժայռաբեկոր եւ քար», - նշեց տնօրենը:

Իրավիճակի մասին անընդհատ զեկուցվում էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ ՀՀ կապի

Զգիտես՝ մաքրո՞ւմ էր փոշին դարերի, թե՛ վերիշուն ամեն գարկը մուրճի: Մտազբաղ էր հայացքը, բայց եւ հպարտ. դարեր ի վեր իրենց տոհմին հատուկ արվեստն այսօր ներկայացնում է ինքը՝ վաղվա օրն էլ համձեռնով զավակներին ու թոռներին:


«Եկեղեցին կառուցվել է 1895 թվին: 1903թ. կառուցված զանգակատունը վերականգնել են ուղիղ 100 տարի հետո: Այստեղ, իմ պապը՝ ուստա Բաբան, ամենաուժեղ վարպետներից մեկն է եղել: Այ էդ թվականից էլ մեր ընտանիքում առաջացել է մասնագիտության իրար փոխանցելը» - քանդակագործը մտովի գնում է մի քանի դար հետ ու հիշում նախնիների պատմությունը:

Հարազատ մորեղբոր ձեռքի աշխատանքներով հպարտանում է նաեւ Տաթևի գյուղապետ Մուրադ Սիմոնյանը: Մեկ առ մեկ հիշելով քեռու մի քանի տասնյակների հասնող քանդակները՝ գոհունակությամբ ավելացնում է, որ Գորիսում է տարածաշրջանում նույնպես Տաթևացին իր ձեռագիրն ունի: Այդ ամենից գատ գյուղապետը վստահեցնում է. «Շուտով կկազմակերպեն թե՛ Դավիթ Բեկի եւ թե՛ Կոնստանտին Օրբելյանի արձանների պաշտոնական բացումը»:

Արմո Տաթևացին այցելում է նաեւ Օրբելյանների կիսախարխուլ տունը եւ հարգանքի տուրք մատուցում մեծն կոմպոզիտորին:

Նրա հաջորդ այցը հարազատների շիրիմներին է, ծաղիկներ է դնում ու գյուղից հեռանում՝ իր հետ տանելով նրանց մասին հիշողությունները: Տաթևն է... Սեզ ժայռերի մեջ ծվարել է նա ու, ասես վերելից, Տիրոջ իրավունքով, ճանապարհում է հյուրերին...

**ԱՐՄԻՆԵ ԱՐԵՆՅԱՆ**



**ԱԶԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ**  
 «Մեղրու ճՇՇ» ՍՊԸ տնօրեն

դիզվառելիքով: Մեր այցելության պահին կատարվում էին մաքրման եւ կահավորման աշխատանքներ: «Ամեն ինչ կատարվել է նախագծի համաձայն, բարեբախտաբար, եղանակային պայմանները բարենպաստ էին, եւ նախատեսված ժամկետում ավարտել ենք աշխատանքները: Մեր կազմակերպության համար դժվար էր, իհարկե, մեկ ուրիշի աշխատանքը շարունակել, բայց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի միջնորդությամբ ստանձնեցինք այդ պատասխանատու գործը: Ժամանակի սղությունը որակի վրա բացասական ազդեցություն չի թողել, քանի որ ներառել ենք որակյալ մասնագետների՝ հաշվի չնստելով վարձատրության չափի հետ», - նշեց «Մեղրու ճՇՇ» ՍՊԸ տնօրեն Ազատ Գասպարյանը: «Շինարարական աշխատանքները կատարվում են արագորեն, քանի որ տեխնիկայից ամբողջ ժամանակահատվածում համապատասխան փորձանուշներն ուղարկվում էր իրենց լաբորատորիա, եւ գրեթե միշտ դրական պատասխան էր ստանում:

# Հարթաշենում համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն

Նոյեմբերի 8-ին Հարթաշեն համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն, որի արդյունքում հաղթող ճանաչվեց գյուղապետի պաշտոնի միակ հավակնորդ, «Կյորու» ՄՊԸ տնօրեն Արմեն Խաչատրյանը (ՀՀԿ անդամ):

## Եռամյա դասախոսություն

Օգոստոսի 1-ից Կապանի ամերիկյան անկյունը Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ համատեղ կազմակերպել է եռամյա դասախոսություն «Տեղեկատվություն ԱՄՆ-ի մասին» թեմայով: Ծրագրի նպատակն է բնակչության տարբեր խավերին ծանոթացնել ԱՄՆ-ի պատմությանը, կառուցվածքին, մշակույթին, ազգային տոներին, լեզվին, կրոնին, տեսարժան վայրերին, նահանգներին, հայտնի ամերիկացիներին: Կապանի ամերիկյան անկյունը Մյունխենի մարզի գյուղական եւ քաղաքային համայնքներում իրականացրեց մի

## Ծրագրի շնորհանդես՝ Սիսիանի պետական քոլեջում

Հոկտեմբերի 21-ին Սիսիանի պետական քոլեջում տեղի ունեցավ «Լեկտորոնային ուսուցման թեմայով վերապատրաստման ծրագրի ներմուծումը» դրամաշնորհային ծրագրի շնորհանդեսը, որին ներկա էին Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը, Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության գրասենյակի ներկայացուցիչը, Սիսիանի տարածաշրջա-

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջից, նախապես հետագա ընտրապայքարից հրաժարվել է գյուղապետի տեղակալ, ՀՀԿ անդամ Արամայիս Դավթյանը: Առաջադրված երրորդ թեկնածուն՝ անկուսակցական Վիլա Մակարյանը եւ, սահմանված ժամկետում հետ է վերցրել գրանցման համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացրած փաստաթղթերը: Ընդ որում՝ երեքն էլ ինքնառաջադրված թեկնածու էին:

Նշենք, որ օգոստոսի 10-ին Հարթաշենի այլևս նախկին գյուղապետ Գագիկ Վանեսյանը հրաժարական էր ներկայացրել՝ առողջական վիճակի վատթարացման եւ արտերկրում բուժում ստանալու անհրաժեշտության հիմնավորմամբ: Սեպտեմբերի 25-ին ՀՀ կառավարությունը վաղաժամկետ դադարեցրել էր Գ.Վանեսյանի լիազորությունները:

### ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հարթ դասախոսություններ դարձրեցին, ուսումնական հաստատություններում, գրադարաններում եւ այլ կազմակերպություններում: Դասախոսությունները վարեցին «Ֆլեքսի» շրջանավարտներ, ԱՄՆ-ում ուսուցում ստացած մանկավարժներ եւ այլ մասնագետներ: Գրականությանը նվիրատվություն կատարվեց ամերիկյան անկյուն կողմից այն կազմակերպություններին, որտեղ անցկացվեցին դասախոսություններ: Ցուցադրվեցին նաեւ Կապանի ամերիկյան անկյան աշխատանքները: Դպրոցականներին եւ ուսանողներին հետաքրքրեցին ամերիկյան անկյունում գործող ուսումնական հաստատությունների, գործող կրթական փոխանակման ծրագրերի ներկայիս միտումները:

### ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒՆԱՆՅԱՆ

#### Կապանի ամերիկյան անկյան համակարգող

նի դպրոցների տնօրեններ, քոլեջի աշխատակիցներ ու ուսանողներ, հյուրեր: Ծրագիրն իրականացրել է Գիտակրթական բարեփոխումների հիմնադրամը՝ Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության գրասենյակի տրամադրած դրամաշնորհի միջոցներով: Ծրագրի շրջանակներում վերանորոգվել է քոլեջի Լեկտորոնային ուսուցման լսարանը, տեղադրվել են համակարգչային սարքավորումներ, ներդրվել է Լեկտորոնային ուսուցման ծրագիրը, վերապատրաստվել է քոլեջի տասներեք դասախոս, որոնց տրամադրվել է դասընթացի ավարտական հավաստագիր:

### ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Գործիս պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը հայտարարում է հեռակա բաժնի 2015 թվականի ընդունելություն միջին մասնագիտական ուսուցման համար հետևյալ մասնագիտություններով.**

Միջնակարգ կրթության հիմքի վրա, ուսման տեսությունները երեք տարի

1. Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ, որակավորումը՝ տնտեսագետ-հաշվապահ, վճարովի-15 տեղ, ուսման վարձը՝ 80000 դրամ:
2. Փոխադրումների կազմակերպումն ու կառավարումը տրանսպորտում, որակավորումը՝ փոխադրումների կազմակերպ.-տեխնիկ, վճարովի-15 տեղ, ուսման վարձը՝ 80000 դրամ:

Դիմորդը քոլեջի ընդունող հանձնաժողովին անձամբ պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում,
2. 4 լուսանկար՝ 3x4 չափսի,
3. Կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ պատճենը՝ նոտարական հաստատումով,
4. Անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր կամ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,
5. Ձին.հաշվ. վկայական, գրքույկ...

Քոլեջի ընդունելությունը բոլոր մասնագիտությունների համար, վճարովի հիմունքներով՝ առանց ընդունելության քննությունների է՝ հարցազրույցով: Քոլեջի լավագույն շրջանավարտներն ուսումը կշարունակեն համապատասխան պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտության 2-րդ կուրսում:

Փաստաթղթերի ընդունելությունը մինչև նոյեմբերի 25-ը, ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 9:00-16:00:

Հասցեն՝ ք.Գորիս, Առաքելյան 32, Հեռախոս՝ 0284-2-21-47, 0284-2-06-48, 099-33-07-37, 077 99 38 23:

**ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (4.75 դասաժամ), աշխարհագրության (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեռ.1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեռ. 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2015թ. դեկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր ժամը 9-ից 14-ը, բացի շաբաթ, կիրակի եւ տոնական օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2015թ. դեկտեմբերի 14-ին ժամը 15:00-ին Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կավարտ բանվան 124:

Տեղեկությունների համար զանգահարել 2-46-37 հեռախոսահամարով:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայտարարվում է մրցույթ՝ «Աշտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (19,25 ժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեռ. 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձեռ. 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշտավանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 17-ին՝ ժամը 12:00-ին, «Աշտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (5 դասաժամ), տեխնոլոգիա (1 դասաժամ), կերպարվեստ (1 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեռ.1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեռ. 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15: 00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2015 թվականի դեկտեմբերի 17-ին ժամը 14: 00-ին Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոցում՝ թաղ. Վաչագան:

Տեղեկությունների համար զանգահարել 094815798:

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ  
**«ՅՈՒՆԵՍԿՕ ԱՇԽԱՐՀ»**  
ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆՑՎՈՒԹՅԱՐ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝  
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerki@mail.ru  
Էլ. կայք՝ www.syuniacyerki.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Շանկի օրվա տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական արձանագրություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 13.11.2015թ.: